

## ՆԱԽԱԳԱՀ ԱՍՏՏ ԶՕՐԱՅՐԻՈՒՄԻ ՅԱՏՈՒԿ ՇՐԱՄԱՆԱԳԻՐ ԱՏՈՐԱԳՐԵՅ

Շաբաթ, 27 Օգոստոս 2022-ին, Սուրբիոյ Նախագահ, սուրբական բանակի ընդհանուր հրամանատար Պաշտար ալ-Ասատ վարչական հրամանագիր մը ստորագրեց: Զրամանագիրին համաձայն, զօրացրուումի կ'ենթարկուին հետեւեալ զինուորական կարգերը ունեցող զինուորական ծառայողները՝



- 2ինուորական պարտադիր ծառայութեան սպաները:
- 2ինուորական պարտադիր ծառայութեան ուսանող սպաները, որոնք կը բոլորեն 1 տարուան իրենց ծառայութիւնը՝ մինչեւ 31 Օգոստոս 2022:

- 2ինուորական պարտադիր ծառայութեան կոչուած սպաները եւ ուսանող սպաները՝ իրենց ծառայութեան շրջանը բոլորելէ ետք:
- 2ինուորական պարտադիր կամ պահեստի կոչուած զինուորները եւ աստիճանաւոր սպաները, հետեւեալ ձեւով.
- 2ինուորական պահեստի կոչուած զինուորները եւ աստիճանաւոր սպաները, որոնք կը բոլորեն վեց ու կէս տարուան իրենց ծառայութիւնը՝ մինչեւ 31 Օգոստոս 2022:
- 1983-ի ծնունդ զինուորական պահեստի կոչուած զինուորները եւ աստիճանաւոր սպաները, որոնք կը բոլորեն երկու տարուան իրենց ծառայութիւնը՝ մինչեւ 31 Օգոստոս 2022:

Զրամանագիրը ի գործ պիտի դրուի, 1 Սեպտեմբեր 2022-ին:

## ՆԱԽԱԳԱՀ ԱՍՏՏ ԲԺՇԿՈՒԹԵԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ ՈՒՆԵՆՈՂՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԻ ԱՌԻԹ Կ'ԸՆԾԱՅԷ

Բժշկական հատուածը մասնագիտական մարդուժով օժտելու նպատակով, Երկուշաբթի, 29 Օգոստոս 2022-ին, Սուրբիոյ Նախագահ Պաշտար ալ-Ասատ հրապարակեց 2022-ի «16» թուակիր սահմանադրական հրամանագիրը, որուն համաձայն Սուրբիոյ համալսարանի բժշկութեան տարբեր ճիւղերու, բժշկական եւ առողջապահական հիմնարկներու եւ հիւանդապահութեան ճիւղի բժշկութեան վկայականի արժանացած շրջանաւարտներուն առիթ պիտի ընծայուի բժշկական հատուածին մէջ ծառայելու, որոշ օրէնքներու հիման վրայ: Զրամանագիրին համաձայն, դիմում ներկայացնող շրջանաւարտներէն ընդունուողները անմիջապէս գործի պիտի սկսին առանց քննութեան կամ մրցումի մասնակցելու: Զրամանագիրին համաձայն, ընդունուողները Սուրբիոյ պետութեան պիտի ծառայեն 10 տարի, իսկ զինուորական ծառայութիւն ունեցողներուն պարագային, զինուորական ծառայութիւնը 10 տարուան ծառայութեան մէջ պիտի ներառուի:



## ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ. «ՕՐԷՆԹԻ ՆԱԽԱԳԻՏԸ ՇԱՆՐ ՀԱՐՈՒՄԸ ԵՎ «ԱԶԳ-ԲԱՆԱԿ» ԳԱՂԱՓԱՐԻՆ»

ՀՅԴ Հայաստանի Գերագոյն Սարմինը 26 Օգոստոսին տարածեց ստորեւ տրուած յայտարարութիւնը.  
 «Այս օրերին, երբ Հայաստանի Հանրապետութիւնն ու Արցախի Հանրապետութիւնը անվտանգ այն լրջագոյն մարտահրաւերներ են դիմագրաւում, երբ աշխարհաքաղաքական գարգացումներն ու տարածաշրջանային լարուածութիւնն ամէն պահի լի են նոր, անկանխատեսելի սպառնալիքներով, երկրի անվտանգութիւնն ամրապնդելու, Հայաստանի Հանրապետութեան զինուած ուժերը վերակազմաւորելու»



ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՐԱԳՈՅՆ ՄԱՐՄԻՆ  
 Շաբ.՝ էջ 8 ➤

## ԸՆՈՒԿԱԿՈՒՄԻ ՊՆՏՈՒՄՈՒՆԵՐԸ ԸՆԿԱՅՈՒՄԸ ՆԻՍՏԻ ՀՐԱՒՐՍԸ ԵՆ

«Դիմադրութիւն» շարժումի Պաշտպանութեան ու անվտանգութեան յանձնախումբը Երեքշաբթի, 30 Օգոստոսին հրաւիրած է ընդլայնուած Նիստի մը, որուն մասնակցած են Ազգային ժողովի պատգամաւորներ, պաշտպանական եւ իրաւապահ համակարգերու նախկին բարձրաստիճան ծառայողներ, ռազմական փորձագէտներ:



Նիստին քննարկուած է Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարութեան կողմէ շրջանառութեան մէջ դրուած եւ հակառակ քննարկման ներկայացուած «2ինուորական ծառայութեան եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրէնքին մէջ փոփոխութիւններ եւ լրացումներ կատարելու մասին» օրէնքի նախագիծը:  
 Միաժամանակ արձանագրուած է, որ պարտադիր զինուորական ծառայութենէն գումարի դիմաց ազատուելու դրոյթը անթոյլատրելի է եւ մերժելի:  
 Քննարկման մասնակիցները հաստատած են, որ Հայաստանի Հանրապետութեան զինուած ուժերու բարեփոխումներու միասնական հայեցակարգի բացակայութեան պայմաններուն մէջ նման չհամադրուած գործողութիւնները անգամ մը եւս կը փաստեն, որ 2018 թուականէն սկսեալ, իշխանութեան գալով, այս քաղաքական ուժը հետեւողականօրէն նպաստում է իր անվտանգութեան արձանագրութեան իրականացմանը:

Շաբ.՝ էջ 3 ➤

## ՔՈՒԷՊ ԴԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹԻՒՆ Ե...

ՄԱՍՆԱԿՅԷ՝ ՍՈՒՐԻՈՅ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ

18/9/2022



### Խմբագրական

## ՍՈՒՐԻՈՅ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՍՊԱՌՆԱՅՈՂ ԿՈՂՄԵՐ

Հալեպի օդակայանին հրթիռակոծումը կրկին լուսարձակի տակ կ'առնէ Սուրիոյ տագնապին լուծումը ձախողութեան մատնելու փորձերը:

Վերջին շրջանին, երբ երկրէն ներս տարբեր կողմեր հաշտութեան բերելու գործընթացներու մասին շուկաներ կը լսուին, Սուրիոյ դրացի երկիրներ, ինչպէս Թուրքիա եւ արաբական կարգ մը երկիրներ Սուրիոյ հետ մերձեցման եզրեր կ'որոնեն, միւս կողմէ սուրիական բանակը կը յառաջանայ հիւսիսային շրջանին մէջ, խաղաղութեան հաստատման քաղաքական եւ զինուորական ջանքերը խափանելու հերթական փորձեր կը կատարուին յատկապէս Իսրայէլի եւ ԱՄՆ-ի կողմէ՝ սահմանափակելու Սուրիոյ դաշնակիցներու ազդեցութիւնը տագնապի լուծման հեռանկարներուն վրայ ու կրկին սպառնալիքներու լեզուով Սուրիոյ ապաքինման ընթացքը խափանելու:

Բնականաբար Իսրայէլ եւ ԱՄՆ հաշտ աչքով պիտի չդիտեն Սուրիա-Բուսիա, Սուրիա-Իրան յարաբերութիւնները, որոնք տնտեսական, ապահովական եւ այլ մարզերու մէջ, այս շրջանին, աշխոյժ թափով կը յառաջանան:

Անոնք հաշտ աչքով պիտի չդիտեն նաեւ Սուրիա-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման թոյլ հաւանականութիւնն անգամ (Սուրիան քաջ գիտէ, որ ՆԱՏՕ-ի անդամ Թուրքիան ինչպիսի՞ կողմերու շահերուն կրնայ ծառայել), որովհետեւ Միջին Արեւելքի մէջ ռուսական միջնորդութեամբ նախատեսուող նման կարգաւորում մը պիտի տկարացնէ ԱՄՆ-ի եւ Իսրայէլի ազդեցութեան օդակները:

Ամիսներ առաջ Իսրայէլ հրթիռակոծեց Դամասկոսի Միջազգային օդակայանը, սակայն Դամասկոս, առանց խուճապի մատնուելու, կարճ ժամանակ մը ետք վերանորոգեց գայն: Այսօր Իսրայէլ այլ հրթիռակոծումով մը կը սպառնայ Հալեպը արտաքին աշխարհին կապող միակ քաղաքացիական օդակայանին:

2022-ի սկիզբէն ի վեր այս Իսրայէլի 22-րդ հրթիռակոծումն է, վերջին անգամ ան հրթիռակոծած էր Թարթուսի եւ Համայի կարգ մը վայրեր:

Քաղաքացիական օդակայաններ հրթիռակոծելով, սակայն, Իսրայէլի թիրախը կը դառնայ նաեւ Սուրիոյ քաղաքացին:

Միացեալ Նահանգներ-Իսրայէլ գործակցութիւնը յստակ կ'երեւի սուրիական տագնապի լուծման խափանման իրենց քայլերուն մէջ, մէկը՝ մերթ րնդ մերթ հրթիռակոծելով սուրիական տարբեր վայրեր, նոյնիսկ ոչ-զինուորական, միւսը՝ քրտական գործօնը օգտագործելով Սուրիոյ հիւսիսային շրջանին մէջ:

Վերջին տասը տարիները ցոյց տուին, որ Սուրիոյ արտաքին քաղաքականութիւնը սպառնալիքներէ չ'ազդուիր: Պատերազմի ողջ ընթացքին ու տագնապի լուծման տարբեր փուլերուն, Սուրիան առաջնորդուած է ու կը շարունակէ առաջնորդուիլ ազգային ու պետական իր շահերէն՝ հասնելու լիարժէք, ոչ թէ ժամանակաւոր, խաբուսիկ խաղաղութեան:

«Գ.»

-«Ուաթան Անլայն»- Չորեքշաբթի, 31 Օգոստոս 2022 Լիբանանի արտաքին գործոց նախարարը յայտնեց որ. «Սուրիա աշխուժօրէն կը գործակցի Լիբանանի եւ ՄԱԿ-ի հաստատութիւններուն հետ՝ Լիբանանի եւ այլ երկիրներու մէջ սուրիացի տեղահանուածներուն տունդարձը ապահովելու համար», անցնելով, որ Սուրիան պատրաստակամութիւն յայտնած է տեղահանուածներուն ապրուստի հիմնական կարիքները ապահովելու, ինչպէս՝ բնակարան, սնունդ, դեղորայք, ուսման կարելիութիւններ եւ այլն:



-«Տամ Փրես»- Չորեքշաբթի, 31 Օգոստոս 2022-ին, Սուրիոյ քարիւղի եւ հանքային հարստութեան փոխնախարար երկրչփ. Խալէտ Ալէճ սուրիական-իրանեան ժողովրդային բարեկամութեան միութեան գործադիր տնօրէն, սուրիական-իրանեան տնտեսական յանձնախումբի նախագահ դոկտ. Հասան Շախիսիի հետ խորհրդակցեցաւ Սուրիոյ եւ Իրանի միջեւ քարիւղի եւ կազի ոլորտներուն մէջ գործակցութեան շուրջ:



-«ՍԱՆԱ»- Չորեքշաբթի 31 Օգոստոս 2022-ին, սուրիական առեւտրական դրամատան ելեկտրոնային բաժնի տնօրէնութիւնը Սուրիոյ մէջ կառավարական քաղաքային, զինուորական եւ հանգստեան կոչուած պաշտօնէներուն աշխատավարձին վրայ նախագահին հրամանագրով յատկացուած նուէր գումարի յաւելումը կատարեց, անոնց անձնական հաշիւներուն փոխանցելով 100.000 ս.ո.: Անոնք կրնան իրենց յաւելուած ամսականները ստանալ դրամատան տարբեր մասնաճիւղերէն:



-«Տամ Փրես»- Չորեքշաբթի, 31 Օգոստոս 2022-ին, Թեհրան խստի դատապարտեց, Սուրիոյ մէջ Իրանի դերակատարութեան ուղղուած ԱՄՆ-ի ամբաստանութիւնները, շեշտելով որ Ուաշինկթըն պէտք է անմիջապէս դադարեցնէ ահաբեկիչներուն իր աջակցութիւնը եւ վերջ տայ Սուրիոյ հիւսիսարեւելեան բաժնին մէջ իր բռնատիրութեան:



-«ՍԱՆԱ»- Չորեքշաբթի, 31 Օգոստոս 2022-ին, Սուրիոյ Հանրապետութեան պատուիրակութիւնը իր մասնակցութիւնը բերաւ ռուսական Մորտովիա Հանրապետութեան Սարանսք քաղաքին մէջ տեղի ունեցած մշակոյթներու հաւաք-մրցումին: Պատուիրակութիւնը իր իւրայատուկ ներկայացումով եւ մասնակցութեամբ գրաւեց առաջին դիրքը:



-«Ուաթան Անլայն»- Երեքշաբթի, 30 Օգոստոս 2022-ին, Յորդանանի մէջ գտնուող սուրիացի տեղահանուածներէն նոր խումբ մը վերադարձաւ Սուրիա, անցնելով սուրիական կառավարութեան տրամադրած «Նասիպ» սահմանային միջանցքէն:



-«Ուաթան Անլայն»- Չորեքշաբթի, 31 Օգոստոս 2022-ին, Սուրիոյ արտաքին գործոց նախարար դոկտ. Ֆայսալ ալ-Մըքտատ Աբխազիոյ փոխվարչապետ, գիւղատնտեսութեան նախարար Փետլան Ճոպոյի հետ խորհրդակցեցաւ երկու երկիրներու տնտեսական յարաբերութեան զարգացման շուրջ: Իր կարգին Ճոպո իր երկրին Սուրիոյ հետ գործակցութիւնը զարգացնելու պատրաստակամութիւն յայտնեց: Ան շեշտեց, որ Աբխազիան բարձր կը գնահատէ Սուրիոյ կողմէ Աբխազիոյ անկախութեան ճանաչումը:





Լուրեր Հայաշխարհին

ՊԱԻԹ ԲԱԲԱՅԵԱՆԸ՝ ՀԱՃԻԵԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ. «ԱՐՅԱԽԸ ԱՏՐՊԵՅՃԱՆԻ ԿԱԶՄԻՆ ՄԵՉ ՄԻԱՅՆ ՄԵԿ ԱՊԱԳԱՅ ՈՒՆԻ՝ ՀԱՅԱԹԱՓՈԽ ԵՒ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ»



Արցախի Հանրապետության արտաքին գործոց նախարար Պալիթ Բաբայանն դիմատետրի իր էջին վրայ գրած է, որ Արցախը Ատրպեյճանի կազմին մեջ միայն մեկ ապագայ ունի՝ հայաթափում, կործանում եւ ցեղասպանություն:

Ան մասնաւորապէս յայտնած է. «Ատրպեյճանի նախագահի օգնական Յաճիեւ յայտարարած է, որ ատրպեյճանցիներն ու հայերը կրնան ապրիլ կողք կողքի՝ իբրեւ մէկ երկրի քաղաքացի: Նախ եւ առաջ հայերն ու ատրպեյճանցիները կրնան ապրիլ մէկ երկրի ներսը, բայց այդ երկիրը միայն երրորդ երկիր կրնայ ըլլալ, օրինակ՝ Ռուսիա, ԱՄՆ, Շուէտ եւ այլն:


Նման օրինակներ ունինք, հակառակ որ Ատրպեյճան ամէն ինչ կ'ընէ, որպէսզի նոյնիսկ երրորդ երկրի մէջ ատրպեյճանցիները հայերուն նկատմամբ թշնամանքով վերաբերին, եւ սա մենք կը տեսնենք տարբեր երկիրներու մէջ:

Բայց եթէ տուեալ պարագային խօսքը կը վերաբերի Արցախին ու Ատրպեյճանին, մենք չենք կրնար ըլլալ Ատրպեյճանի կազմին մէջ, որովհետեւ Արցախը Ատրպեյճանի կազմին մէջ միայն մեկ ապագայ ունի՝ հայաթափում, կործանում եւ ցեղասպանություն»:

ՓԱՇԻՆԵԱՆ ՈՒ ՓՈՒԹԻՆ ԲՆՆԱՐԿԱԾ ԵՆ ԵՌԱԿՈՐՄ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՇԵՏԵՈՂԱԿԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինեան 29 Օգոստոսին հեռաձայնային գրոյց ունեցած է Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութինի հետ: Վարչապետի աշխատակազմին փոխանցումով, գրուցակիցները շնորհաւորած են իրարու Հայաստանի եւ Ռուսիոյ միջեւ բարեկամութեան, գործակցութեան եւ փոխադարձ օգնութեան պայմանագրութեան 25-ամեայ յոբելեանին առիթով, որ կը լրանայ այսօր: Կողմերը յայտնած են, որ այսուհետեւ հայ-ռուսական դաշնակցային փոխշահաւետ յարաբերութիւնները տարբեր ոլորտներու մէջ պիտի շարունակեն արդիւնաւետ կերպով զարգանալ ու ամրապնդուի:

Նիկոլ Փաշինեան եւ Վլատիմիր Փութին միտքեր փոխանակած են հայ-ռուսական օրակարգային շարք մը հարցերու շուրջ: Անդրադարձ կատարուած է նաեւ Լեռնային Ղարաբաղի իրավիճակին: Յատկապէս ընդգծուած է 9 Նոյեմբերի 2020-ի,



11 Յունուարի 2021-ի եւ 26 Նոյեմբերի եռակողմ համաձայնութիւններու հետեւողական իրականացման կարելորութիւնը:

ԱՄՆ Ի ԵՒ ՖՐԱՆՍԱՅԻ ՊԵՄՊԻՆԵՐԸ ՄԵՐՃԱԾ ԵՆ ԱԼԻԵԻ ԸՈՒՇԻ ԱՅՅԵԼՈՒԹԵԱՆ ՀՐԱԽԻՐԸ

Ատրպեյճանի նախագահի օգնական Յիքմէթ Յաճիեւի խօսքին համաձայն, այն երկիրները, որոնք իրականացուցած են Միւսքի խումբի համանախագահներու առաքելութիւնը, պետք է ամչնան միջազգային հանրութենէն:

Յիքմէթ Յաճիեւ յայտնած է, որ ամբողջ աշխարհին ներկայացուցիչներ այժմ Շուշի են.

«Եւրոպայի, Ասիոյ, Լատինական Ամերիկայի երկիրներու ներկայացուցիչները, մեր դիւանագետ ընկերներն ու գործընկերները չեն կրնար պահել իրենց զարմանքը Ատրպեյճանի կողմէն իրականացուող վերականգնումի աշխատանքներուն առընչութեամբ: Բայց կայ երկու երկիր, որոնք չեն մասնակցի այս նախաձեռնութեան, անոնք են ԱՄՆ-ն եւ Ֆրանսան՝ անոնց բացակայութեան պատճառով այստեղ հասկնալ չենք կրնար... Դետագային անոնց այլեւս չենք իրաւիրեր...»



Անոնց բացակայութիւնը, Միւսքի խումբի վերականգնումի եւ վերակենդանացումի մասին յայտարարութիւնները անգամ մը եւս ցոյց կու տան, թէ ինչ առաքելութիւն իրականացուցած են 30-ամեայ բանակցային գործընթացին գծով: Անոնք չեն կրնար ընդունիլ Ատրպեյճանի տարածքային ամբողջականութիւնը կամ Շուշի քաղաքի վերակառուցման ու վերականգնման աշխատանքները:

Առաջին կարգին անոնք պետք է պատասխան տան ատրպեյճանական ժողովուրդին: Եթէ զիրենք կը համարեն Ատրպեյճանին բարեկամ երկիրներ, ապա պետք է իմանան, որ Շուշին ատրպեյճանական ժողովուրդին սիրտն է, քաղաքը Ատրպեյճանի իւրաքանչիւր քաղաքացիի սրտին մէջ է: Անոնք, որոնք այստեղ չեկան մէկ անգամ եւս ցոյց կու տան, թէ 30 տարուան բանակցութիւններու ընթացքին ինչ նպատակներ ունին ու ինչով շահագրգռուած են»:

ԱԼԻԵԻ. «ՄԵՆՔ ՎԵՐԱՊԱՐՉԱՆՔ ԼԱՉԻՆ»

«Ինթըրֆաքս» լրատու գործակալութեան համաձայն, Ատրպեյճանի նախագահ Իլիհամ Ալիեւ «Թուրքեր»-ի իր էջին վրայ յայտնած է, որ Ատրպեյճանի հսկողութեան տակ առած է Բերձոր անկը եւ Աղաւնոյ ու Սուս գիւղերը:

«Այսօր մենք՝ ատրպեյճանցիներս, վերադարձանք Լաչին (Բերձոր) քաղաք, ատրպեյճանական բանակը տեղակայուած է Լաչինի մէջ: Չսպուխ (Աղաւնոյ) եւ Սուս գիւղերը հսկողութեան տակ են», գրած է Ալիեւ:



Լեռնային Ղարաբաղի Ներքին Գործոց նախարարութիւնը նախորդ Յինգզաբթի օր յայտնած էր, որ Արցախը Հայաստանին կապող ճամբու Բերձորի (Լաչին) հատուածը բաց է, ազատ ու անվտանգ երթեւեկը կ'ապահովեն ռուս խաղաղապահները:

Նշենք որ Բերձորի, Աղաւնոյի եւ Ներքին Սուսի համայնքներէն տարհանուած հայ ընտանիքները մեծ մասամբ հաստատուած են Հայաստանի Հանրապետութեան տարբեր մարզերու մէջ, մեկ մասն ալ, որ փախաք յայտնած է բնակիլ Արցախի մէջ եւ ժամանակաւորապէս տեղաւորուած է Ստեփանակերտի պանդոկներուն մէջ:

ԸՆՊՈՒՄՏՈՒՐ... Սկիզբ՝ էջ 1

տակ ունի կազմալուծել Հայաստանի Հանրապետութեան անվտանգութեան գլխաւոր երաշխաւոր զինուած ուժերը, փոշիացնել արցախեան ազատամարտով, զոհողութիւններով միս ու արիւն ստացած բանակը:

44-օրեայ պատերազմէն ետք կը շարունակուի Արցախի պաշտպանութեան համակարգի ապառազմականացումը, որմէ զերծ չեն մնար նաեւ Հայաստանի զինուած ուժերը: Այս բոլորը տեղի կ'ունենան թշնամի երկրի ղեկավարին կողմէ հայոց բանակի թուլացման, զարգացման կարելիութիւններու բացառման՝ պարբերաբար հնչող յայտարարութիւններու խորապատկերին վրայ:

Իշխանութեան ներկայացուցած այս նախաձեռնութիւնը հերթական քայլն է վերացնելու Հայաստանի զինուած ուժերը:

Զննարկման ընթացքին արձանագրուած է, որ այս նախագիծը հակասահմանադրական տարրեր կը բովանդակէ եւ ոչ թէ պիտի ամրապնդէ պաշտպանական համակարգը, այլ առաւել պիտի խորացնէ ներհասարակական անհանդուրժողականութիւնը՝ ծառայութիւնը դարձնելով ոչ թէ պատուաբեր ու պարտադիր քայլ, այլ պիտի ձեւաւորէ չակերտաւոր առանձնաշնորհեալներու խումբ մը, որ իր սահմանադրական պարտքը կատարելէն պիտի ազատի 24 միլիոն դրամոց փրկագինով:

Զննարկումներուն հիմամբ որոշուած է շարունակել այս հարցի արծարծումը տարբեր հարթակներու մէջ, իսկ վերջնական ու միասնական դիրքորոշում ձեւաւորելու համար յառաջիկայ օրերուն Պաշտպանութեան եւ անվտանգութեան յանձնախումբին նախաձեռնութեամբ պիտի կազմակերպուի լայն շրջանակներու ընդգրկումով հանրային քննարկում, որուն մասին պիտի տեղեկացուի աւելի ուշ:

## ՍՓԻՌՔԻ ՏԱՐՈՒՄԸ ԱՌԻՅՈՎ

### ՍՓԻՌՔԸ ԵՎ ՆՈՐ ՄԱՐՏԱՅԻՆՆԵՐՈՒՆ ԸՆԴԱՌԱՋ



Ս. Մահսեդեան

#### ԵՐԿՈՒՆՊԱՏԱԿ

Սփիւռքի պահպանումն ու զարգացումը, բարգաւաճումը ունին երկու հիմնական նպատակ: Առաջինը՝ իւրաքանչիւրին ինքնաբաւութեան, գոյութեան պահպանման ու զարգացման, բարելւման (հայկականութեան հետ կապի իմաստով) հրամայականն է, իսկ երկրորդը՝ մայր հայրենիքին ու ազգի տարբեր կարիքներուն, պահանջներուն հասնելը:

Կար ժամանակ, եւ ատիկա՝ Յեղասպանութեան յաջորդող քանի մը տասնամեակներն էին, մինչեւ անցեալ դարու 40-ականներու երկրորդ կիսուն եւ աւելի ուշ կազմակերպութեամբ ծաւալուն ու սահմանափակ ներգաղթները, երբ հայութեան մէջ տիրապետող էր այն մտածողութիւնը, թէ Սփիւռքը ինքնանպատակ գոյութիւն չէ, Սփիւռքի հայուն գոյութիւնն ու վախճանական նպատակը՝ Մայր Հայրենիքն է, վերադառնալ գրաւեալ հողեր, հաստատուիլ այսօր Հայաստան կոչուած հողամասին վրայ, հոգ չէ թէ անկախ ամբողջական Հայաստանին մէջ փոքր մասնիկն էր:

Յետոյ, եւ միշտ ալ սփիւռքեան կեանքին ապրած զարգացումներուն պատճառով (բացասական կամ դրական որակում չտանք այդ զարգացումներուն), հետզհետէ կազմաւորուեցաւ նոր մտածողութիւն, թէ՛ Սփիւռքը ունի երկու նպատակ. նախ՝ հասնիլ հայրենիքին, աչքերը սեւեռած պահել անոր, սակայն նաեւ վախճանական այդ նպատակին հասնելու ճամբուն վրայ, Սփիւռքը ընդունիլ իբրեւ ապրող ու կենսական միաւոր (դարձեալ չմտնենք այն մակարամասնութեան մէջ, թէ Սփիւռքը ինչո՞ւ կարելի չէ մէկ միաւոր նկատել, այլ բազմաթիւ միաւորներու գումար մը), Սփիւռք մը՝ որ պէտք է ինքն իրեն ու հայկական աշխարհին նայի նախկինէ տարբեր տրամաբանութեամբ, դատողութեամբ, ընդունի, որ կամքէ անկախ պայմաններով գոյառած Սփիւռքը ցնոր տնօրինութիւն մը՝ տակաւն ներկայութիւն է ու պիտի մնայ հայութեան կեանքին մէջ: Եթէ մատնանշուած՝ յետ-Յեղասպանութեան առաջին տասնամեակներուն, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՆՈՒՄԻ ՍՓԻՐՔԻ ԿԱՐԳԱՅԻՆ ԿԱՌԱՅՈՒՄԸ հասկացութիւնը առաւելաբար կը սահմանափակուէր հայութեան թիւի պահպանումով, հատատութեանց հոգացումով եւ լեզուի, պատմութեան եւ յարակից բաներու իմացութեան սահմաններուն մէջ, հետզհետէ զարգացաւ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՓԻՐՔԻ ԿԱՌԱՅՈՒՄԸ հասկացութեան նոր՝ աւելի բազմաճիւղ ըմբռնումը: Չուզահեռաբար, եւ տարուէ տարի, մեր քաղաքական մտածողութեան եւ գործին տարածման իբրեւ արդիւնք, հասկացանք, որ Սփիւռքի գոյատեւումը որքան կարելի է (եղեր) մայր հայրենիքին ու ազգին կարիք-

ներուն, պահանջներուն դիտանկիւնէն: Երկրորդ արժէք, Արցախեան Շարժումէն եւ անկախութեան վերահաստատումէն շատ առաջ, մեր իրաւատիրութեան պայքարի դաշտերը ընդարձակուեցան, պայքարը դուրս եկաւ յիշեալ՝ առաջին տասնամեակներու ներշնչութիւնէ:

Այնպէս եղաւ, որ մեր Դատին հետապնդման աշխատանքը առաւելաբար դարձաւ սփիւռքեան «մենաշնորհ», որովհետեւ, գիտէնք, խորհրդային օրերուն՝ Հայաստանի պետական հաստատութիւնները անկարող էին միանալու այդ աշխատանքներուն:

Կարելի չէ մոռնալ եւ արհամարիել այն անուղղակի եւ իսկապէս յեղաշրջական գործը, որ տարուեցաւ յետ-ստալինեան ժամանակաշրջանին: (Իսկ թէ անկախութեան վերահաստատումէն ետք ի՞նչ կարելի էր ընել, ի՞նչ պէտք է ընենք այսօր՝ բոլորովին այլ հարց է, նման հարց արծարծելը, դժբախտաբար, կը դիտուի «կըքաղաքականացնեն» ծուռ հայելիով: Նպատակ չունինք այստեղ բանալ այդ «Բիւզանդական վեճ»-ին էջը):

Բոլորս ալ ծանօթ ենք, որ անկախութեան վերահաստատումէն առաջ, Յեղասպանութեան 50-ամեակի նախօրեակին, բայց մանաւանդ անկէ ետք, Սփիւռքը ինչպիսի՞ վիթխարի աշխատանք տարած է մեր Դատի ծանօթացման եւ մեր իրաւունքներուն ճանաչման, հաստատման մարզին մէջ, եւ այդ աշխատանքը տարածուած է աշխարհով մէկ, գուրկ՝ պետական յենարանէ: Անկախ պետականութեան վերահաստատումէն ետք ալ, Սփիւռքի վսեմ առաքելութիւններէն մէկը մնաց է՝ մեր Դատին հետապնդումը: Վերջին երեք տասնամեակներուն արձանագրուած արդիւնքներն ալ վաւերագրուած են եւ ամրագրուած՝ մեր նորագոյն պատմութեան մէջ: Ըսել կ'ուզենք, որոշ դիտանկիւնէ Սփիւռքը ինքնանպատակ-ինքնաբաւ դարձնելու դիտաւորութեան գուզահեռ, մեր ժողովուրդը ապրեցաւ ՍՓԻՐՔԸ Ի ՍՊԻՐՔՈՒ ՀԱՅՐԵՆԻՒԹՅԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԲԱԳՈՒՄ արտայայտութիւնները, կենսափորձը:

Երեւակայութեան վստահելու պէտք չունինք, տեսնելու եւ ըմբռնելու համար, որ նիւթապէս եւ կազմակերպութեամբ՝ այսօրուան վիճակէն շատ աւելի հզօր Սփիւռք մը որքան աւելի մեծ ծառայութիւն պիտի մատուցէ հայրենիքին (կըրկնենք՝ անցնելով սեփական կարիքներու բաւարարման մակարդակէն անդին), որքան ըրած է մօտիկ կամ հեռաւոր անցեալին:

Դարձեալ կանգ առնենք մեր

օրերու փորձին վրայ: Արցախը, 44-օրեայ պատերազմին, անկէ առաջ եւ անկէ ասդին, թիրախ կը մնայ մեր դարաւոր թշնամիին սպառնալիքներուն, կը գտնուի մասնակի կամ ամբողջական անեացման վտանգին տակ (նորագոյն իրադարձութիւններուն մէջ չմտնենք, ո՛չ ալ «քաղաքականացում»-ի դաշտ փոխադրենք քննարկումը, հակառակ անոր, որ վիճակին քաղաքականացումը, աշխարհաքաղաքական հորիզոններու դիմաց դիտելը տարիներէ ի վեր կը պարտադրուի մեզի): Յիշենք Սփիւռքի պատմակշիռ դերը, երբ աւելի քան տասը տարի առաջ հայութեան եւ Հայաստանի պետութեան զլխուն վերեւ կախուեցաւ փրոթոքը՝ «Դատկլեան սուր»ը: Հայաստանի ժողովուրդին չափ, անկէ ալ աւելի՝ մեծ ուժակաւորութեամբ շարժեցաւ Սփիւռքը եւ կարելի գործն մը եղաւ վստասա-



բեր ուղիին խափանման (չենք արհամարիել այլ տուեալներ, ազդակներ): 44-օրեայ պատերազմի օրերուն, Սփիւռքը դարձեալ շարժեցաւ, թէեւ ո՛չ անհրաժեշտ տարածութեամբ, աշխարհի ուշադրութիւնը առաջնորդելու համար թուրք-ազերիական ոճիրներուն վրայ: Անկէ ետք, Սփիւռքի դերակատարութիւնը կը մնայ շատ աւելի սահմանափակ, հակառակ Հայ Դատի եւ նման միաւորներու ի գործ դրած ճիգերուն (կարելի մանրամասնութիւններ են տարբեր հզօր պետութիւններու մօտ ի նպաստ Հայաստանի եւ Արցախի ձեռք բերուած շօշափելի արդիւնքները): Այս ծիրին մէջ, Սփիւռքը հաւատարիմ է իր դերին, օգնութեան ձեռք կ'երկարէ մայր հայրենիքին ու անբաժանելի Արցախի (անկախ հայրենի իշխանութիւններուն ծանօթ դիրքորոշումէն եւ վարքագիծէն): Ահա թէ նաեւ ո՛ր պէտք է փնտռել հզօր ու կազմակերպ Սփիւռքի մը դերը՝ համահայկական դաշտերուն մէջ: Այդ դերը այսօր շատ աւելի շեշտուած է, երբ աչքի առջեւ բերենք հայրենի հողերուն պատառ-պատառ կորուստը, թշնամիին հանապազօրեայ ոտըն-ծգութիւններն ու արձանագրուած մարդկային ու նիւթական կորուստները:

Իսկ մեր Դատին դաշտը միակը չէ, ուր Սփիւռքը դերակատար եղած է ու կը մնայ: Սա արձանագրեցինք իբրեւ բազում օրինակներէն մէկը, իբրեւ իրատապ եւ շարունակուող դերակատարութեան օրինակ:

#### ԵՇՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Վերի տողերուն մէջ մեր կատարած քննարկումն ու արձանագրած

մտածումները համապարփա՞կ են կամ սպառի՞չ:

Անշուշտ թէ ո՛չ: Այս ուրուագծային տողերը արձանագրեցինք այն մօտեցումով, որ Սփիւռքի հարցերուն, անոր դիմաց բարձրացող հրամայականներուն մեր մօտեցումը ինչպիսի՞ ընդարձակ հորիզոններով պէտք է դիտել, անկախ անկէ, թէ այս կամ այն ենթաբաժանումին մէջ (լեզուի պահպանում, դպրոցներ, ազգային հաստատութիւններ) այսօր ինչպիսի մասնագիտական քննարկումի կը կարօտինք, մարտահրաւերներու դիմագրուման համար ինչպիսի նախադրեալներ պէտք է ապահովենք, մարտավարութիւն մշակենք եւ մեր տեսողութեան դաշտերը ինչպիսի հորիզոններու պէտք է բանանք:


Նոյնքան եւ աւելի կարելի է այն, որ մեր քննարկումները մտնեն գործնական եւ յառաջատարական փուլ, երբեմն լաւ սկսուած աշխատանք մը կիսատ չթողուք եւ քանի մը տարի ետք, նմանօրինակ նախաձեռնութեան մը դիմենք՝ մոռնալով նախկինը, առաւել կամ նուազ չափով ձեռք բերուածները: Պէտք է անցնիք տարեկան տեղեկագիրները պարզապէս արձանագրութիւններով հարստացնելու «սիրողական» հոգեբանութենէն անդին, արիեստավարժ աշխատանքին տանք շէնք մը քար առ քար կառուցելու ընթացքը, ուր ամենէն փոքր քարն անգամ իր տեղն ու դերը ունի կառուցին բարձրացման եւ ամրացման մէջ:

Հայութիւնը ունի ներուժ, հնարաւորութիւններ, կարողականութիւն, որ լայն ու գիտական մօտեցումով անհրաժեշտ ուշադրութեան, քննարկումի չէ արժանացած: Մեր նշումները միայն մէկ մասն են պահանջուածին, որուն հասնելու համար, կարելի են ինքնաճանաչում, Սփիւռքին ամբողջական իրազեկում, գիտակցութեան զարգացում, բայց մանաւանդ «մէկը բոլորին համար, բոլորը մէկուն համար» տեսութեան այժմեականացումը՝ համաձայն Սփիւռքի հզօրացման եւ հայրենիքին հետ կամուրջներու ամրապնդման: Յաճախ կը ինչեւ ասորումներ, թէ «որքան ուշացած էլ մեր առաքելութեան կատարման մէջ»: Պատմութիւնը անվերջանալի շարունակութիւն մըն է, չի սիրեր «ուշացած ենք» ով անգործութեան մատնուողը, կրաւորականութեան դիմողը: Գործնական շօշափելի քայլ կրնայ ըլլալ, օրինակի համար, մասնագետներէ բաղկացած ՀԱՄԱԳԱՂՈՒԹՅԱՆ միաւորի մը կազմութիւնը (ո՛չ այն սահմաններուն մէջ, որուն մասին յաճախ այլապէս օգտակար առաջարկներ հրապարակ կը նետուին եւ... շուտով կը մոռցուին), որ գործէ ՀԱՄԱՅՈՒՆՄԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ մեր տրամաբանութեամբ եւ հայեցակէտով, հեռու՝ ժամանակակից քաղաքական հաշիւներէ, ստեղծէ աշխատանքի այնպիսի ծիր մը, որ լաւագոյնս օգտագործէ հայրենի պետութեան (հոս ալ գատորոշենք պետութիւնը՝ իշխանութենէ) կարողականութիւնները:

Չանտեսենք: Մինչեւ այսօր



## ԹՈՒՐԵԱՅԻ ԹԱՆԳԱՐԱՆԱՅԻՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ՝ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ ԿԵՂՇԵԼՈՒ ԵՒ ԻՐԱՑՆԵԼՈՒ ԳՈՐԾԻՔ



Մելինե Անումեան

Թրքագետ, պատմական գիտությունների թեկնածու

Վերջերս յայտնի դարձավ, որ Գերմանիայի Ֆրանքֆուրտ քաղաքին մեջ կազմակերպված ցուցադրություններից մեկի ընթացքում Ուրարտուն ներկայացուցել է որպես Ատրապեճան: Ի հարկե կարելի է ուղղակի ծիծաղել այդ ամենի վրայ՝ մտածելով, թե նման դեպքերը սովորական են իր մեծ եղբորից՝ Թուրքիայից օրինակ վերցնող այս պետության համար: Սակայն իմ ծիծաղն այլևս չի գալիս: Ընդհակառակը՝ վերջերս սկսել են լրջօրեն մտահոգուել, որ եթե թուրք-ատրապեճական տանդեմի (օրակարգի «Գ.») այս քաղաքականությունը, մեր պետությանը՝ դրա դեմ որեւէ քայլ չձեռնարկելը ու միջազգային հանրության անտարբերությունը շարունակուեն, ապա ոչ շատ հեռավոր ապագայում ի վերջոյ թուրքերը կը յաջողեն այս տարածքներում իրենց «բնիկ» լինելու մասին թեզն ապացուցելու գործում...

Իսկ ինչպե՞ս է տարուում այդ քաղաքականությունը թուրքական պետության կողմից: Հիմնականում այդ գործն ստանձնել է Թուրքիայի մշակույթի եւ զբոսաշրջության նախարարությունը, որն էլ իրականացնում է ամենաազդեցիկ ձեռքով, յատկապես թանգարանների միջոցով՝ իր ասելիքը հասցնելով լայն զանգուածներին:

Մենք՝ հայերս, բնականաբար մտածում ենք, թե ախր ո՞ր մի արտասահմանցի լուրջ գիտնականը տուրք կը տայ այդ քարոզչությանը... Միգուցե կրթուած եւ ուսեալ արտասահմանցիները, տեղեկացուած լինելով պատմությանը, չտրուեն այդ քարոզչությանը, բայց չմոռանանք, որ թանգարաններ եւ այլ տեսարժան վայրեր այցելում են նաեւ բազմաթիւ ոչ-մտաւորական օտարերկրացիներ, եւ հենց նրանք են դառնում այդ կեղծ թեզերի հիմնական հասցեատերը:

Բերեմ 1-2 օրինակ:  
Լինելով պատմաբան՝ բնականաբար սիրում եմ այցելել թանգարաններ, եւ երբ գուտ գործի բերումով (բայց ոչ երբեք՝ զբոսաշրջության նպատակով) գտնուում եմ Թուրքիայում, պարտադիր գնում եմ տեղի յայտնի թանգարանները:

Մի անգամ, երբ Իզմիրում էի (պատմական Նիկոմեդիան, որն այժմ գտնուում է Զոչաեւի նահանգում), այցելեցի տեղի Յնագիտության թանգարանը, որը կոչւում էր «Քոչաեւի ինագիտության եւ ժողովրդագրության թանգարան» (թուրք՝ «Kocaeli Arkeoloji ve Etnografya Muzesi»):

Ինձ հետաքրքրում էր, թե ինչ են ցուցադրում թուրքերը այն պատմական քաղաքում, որտեղ արդէն գրեթե ոչ մի յունական կամ բիզանդական հետք չէին թողել: Ի դէպ՝ նախ Հռոմեական, ապա՝ Բիզանդական կայսրությանը պատկանած, ինչ-

պէս նաեւ Հռոմեական կայսրության մայրաքաղաքը եղած այս երբեմնի հինաուրջ քաղաքում գրեթե անհնար էր յունահռոմեական հետքերի հանդիպելը: Դրա փոխարեն կանգնեցուած էր մի յուշարձան, որ նուիրուած էր յուն-թուրքական բնակչության փոխանակմանը, այն է՝ 1923 թ. կնքուած համաձայնագրին, ըստ որի՝ Յունաստանի թուրքերը հարկադրաբար տեղափոխուել են Թուրքիա, իսկ այստեղի յոյները՝



Յունաստան: Ուշագրաւ էր նաեւ յուշարձանի անուանումը՝ «ազգային ինքնութեան եւ դիմադրութեան յուշարձան» (թուրք՝ «Milli Kimlik ve Direnis Aniti»):

Ինչ թուրք ազգային ինքնութեան մասին կարող էր խօսք գնալ երբեմնի յունական քաղաքում... Գուցէ թուրքերը նկատի ունեն այն յարթանակը, որ ցաւօք իսկապէս տարել են Թուրքիան միատարր դարձնելու, յունական, ասորական, հայկական բնակավայրերը վերջնականապէս թուրքացնելու գործում: Յիշում եմ նաեւ այն տհաճ ապրումները, որ ունեցայ Տրապիզոն քաղաքում, այդ յունական օրրանում, որի կեդրոնը լցուած էր մուսուլմանական գլխաշորեր կրող թուրք կանանցով...

Սակայն վերադառնալով «քոչաեւի ինագիտության եւ ժողովրդագրության թանգարանին»: Այստեղ, որպէս ինագիտական նիւթ, բնականաբար ցուցադրուում են հին յունահռոմեական, հելլենիստական եւ բիզանդական դարաշրջաններին պատկանող ցուցանմուշներ: Սակայն թուրքերը չէին հանդուրժի, եթէ որեւէ կերպ իրենց «ներկայութիւնը» չպարտադրէին այդ թանգարանում:

Եւ թուրքական քարոզչամբեռնան այդ նպատակով ընտրել էր շատ պրիմիտիւ (նախնական «Գ.») մի հնարք, որն առաջին հայեացքից ծիծաղելի էր թուում, սակայն իրականում կարող էր եւ հասնել իր նպատակին. ինագիտական գտածոների հետ մէկտեղ, որպէս «ժողովրդագրական» նիւթ, ցուցադրուած էին

արիեստականօրէն ստեղծուած տեսարաններ՝ թուրքերի մասնակցութեամբ, օրինակ՝ լաւաշ թխելու տեսարան (միանգամից 2 նպատակի են հասնում. «պարտադրում են» իրենց ներկայութիւնը տուեալ տարածքներում եւ իրենց վերագրում իրականում իրենց հետ ոչ մի կապ չունեցող երեւոյթներ) կամ 19-րդ դարի ձեռագործ իրեր...

Ի հարկե խելքը գլխին այցելուի մօտ հարց կ'առաջանայ՝ ինչ կա ունեն 19-րդ դարի ձեռագործ իրերը ինագիտութեան հետ: Սակայն, քանի որ թուրքական մշակութային քաղաքականութիւնն ուղղակի արգելում է առանց թուրքականի որեւէ բան հրամցնելը, նրանք դիմում են այդ հնարքին, որն իրականում ազդում է ոչ միայն շարքային թուր-

տեղ, ըստ իր տրամաբանութեան, գաղթել են աւելի ուշ ժամանակաշրջանում...» Բնականաբար, իմ կողմից նա ստացաւ իրեն արժանի պատասխանը, սակայն ինչ կարողես անել այն բազմաթիւ, նաեւ օտարերկրեայ, զբօսաշրջիկների համար, ովքեր, տեղեկալ չլինելով պատմութեանը, կարող են հանգիստ նման կարծիք ձեւաւորել՝ այցելելով Թուրքիայի մայրաքաղաքի արտում գտնուող այդ թանգարանը...

Վերջերս էլ տեղեկացայ, որ թուրքական քարոզչամբեռնան նոր հնարք է գտել. արտասահմանցի այցելուներին պետք է պարտադիր ուղեկցեն թուրք կամ Թուրքիայի քաղաքացի ուղեկցորդները, ովքեր բնականաբար կը շարունակեն պատմութեան կեղծ թեզեր ներկայացնել օտարերկրեայ հիւրերին, մինչեւ իսկ՝ Արեւմտեան Հայաստան այցելած մեր հայրենակիցներին...

Մինչ թուրքերը շարունակում են աշխոյժ գործել նաեւ մշակութային ոլորտում, մենք վերացնում ենք մշակույթի մեր նախարարութիւնը, այն միացնում չգիտեն ինչ ոլորտների հետ: Մինչ թուրքերը անգամ հայկական խմբերին պարտադրում են թուրք ուղեկցորդներ, մենք Հայոց Յեղասպանութեան թանգարանում անվճար կայտի (ուղեկցողի «Գ.») ծառայութիւնը դարձնում ենք վճարովի, մինչեւ իսկ կարգադրում, որ այս էապէս կարելու թանգարանում արտասահմանցի այցելուն ուղեկցողը պատուիրի նախապէս... Այսինքն՝ եթէ որեւէ օտարերկրացի տեղեկացուած չի լինում այդ ընթացակարգին, մնում է առանց կայտի ծառայութեան...

Յաւով պետք է արձանագրել, որ այս առումով շատ բան ունենք սովորելու թուրքերից, այն թուրքերից, որոնք ի տես աշխարհի ոչնչացնում են մեր մշակութային կոթողները Արեւմտեան Հայաստանում, Արցախում ու Նախիջեանում, իսկ մենք ոչինչ չենք կարողանում դրա դեմ ձեռնարկել՝ մեր յուշարձանները կրցախից հանելուց բացի: Տեսնես հետագայում ինչպե՞ս ենք կարողանալու ապացուցել, որ դրանք գտնուել են այդ տարածքներում...

Ես մտավախութիւն ունեմ, որ այսպէս շարունակուելու դեպքում ի վերջոյ թուրք-ատրապեճական այդ մշակութային քաղաքականութիւնը կը յաջողի, եւ դարեր անց մինչեւ իսկ աշխարհի «գիտնականները» չեն յիշի այս վայրերում հայկական ներկայութեան մասին: Նման փաստի առաջ չկանգնելու համար պետք է յստակ մեքանիզմներ ստեղծել, այլապէս շատ ուշ կը լինի...

Akunq.net

**ՊԱՇՏՕՆԵԱՆԵՐՈՒ ԿԱՐԻՔ**

**Հայ Ծերանոցը կարիքը ունի հետեւեալ պաշտօնեաներուն.**

- Բուժքոյրի,
- Քարտուղար/ուհիի,
- Գիշերային պահակի,
- Գանձապահի:

**Փափաքողները կրնան ներկայանալ Հայ Ծերանոց, ամէն օր առաւօտեան ժամը 10:00-էն 1:00:**

**Հեռաձայն՝ 4647398:**

*Հայ Ծերանոցի կնամակալութիւն*



## ՀԱՄԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ 11-ՐԴ ՄԱՐԳԱԽԱՂԵՐՈՆ ՀԱՄԱԽՄԲԵՑԻՆ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՆ



Ժիրայր Կարապետյան

ՀՄԸՄ-ի Կեդրոնական Վարչության հովանավորությամբ չորս տարին անգամ մը կազմակերպուող համահայրենական մարզախաղերը կը հանդիսանան ՀՄԸՄ-ական մարզիկներուն համար այն բերկրալի առիթը, որուն ընթացքին անոնք հայաբոյր մթնոլորտի մէջ իրենց մարզական կարողութիւնները ի յայտ կը բերեն, կը մրցակցին եւ տարբեր շրջաններէ ժամանած ՀՄԸՄ-ական քոյրերու եւ եղբայրներու հետ նոր բարեկամութիւններ կը հաստատեն մայր հողին վրայ:



Վերջին տարիներուն պսակածէ ժահրի համաճարակը հարուածեց ողջ աշխարհը: ՀՄԸՄ-ն ալ իր կարգին ազդուեցաւ այս համաճարակէն եւ տարիներու անաղութիւն դարձած քառամեայ համահայրենական մարզախաղերը յետաձգեց մէկ տարիով:

Մարզախաղերը իւրայատուկ էին այս տարի, որովհետեւ միութեան պատմութեան մէջ առաջին անգամ ըլլալով, անսղակական շրջաններու կողմէն, այս խաղերուն մասնակցեցան նաեւ ՀՄԸՄ-ի Թիֆլիսի եւ Նորակազմ Արցախի մասնաճիւղերը: Մարզախաղերը ընթացք կ'առնեն «Հայ Մարզիկի Օր»-ը: Միութեան հիմնադիր Շաւարշ Զրիսեանի ծննդեան օրը՝ 22 Յուլիսը, ՀՄԸՄ-ի կողմէ հռչակուած է «Հայ Մարզիկի Օր», յիշատակելու մարզական փառաւոր սերունդներու անցեալի յաղթանակները եւ պատուելու ներկայ հայ մարզիկները ընդհանրապէս եւ ՀՄԸՄ-ական մարզիկները յատկապէս:

Գնահատելի մտայնացում էր «Հրաշք» մարզախաղերը, որուն մաս-



նակցեցան յատուկ խնամքի կարօտ 200 պատանի-երիտասարդներ, առաջին անգամ ըլլալով:

Այս տարի, հակառակ Սուրիոյ տնտեսական ծանր վիճակին, ՀՄԸՄ-ի Սուրիոյ շրջանը Հալէպի եւ Գամիշլիի մասնաճիւղերէն 48 մարզիկներէ բաղկացած պատուիրակութեամբ մը մասնակցեցաւ համահայրենական 11-րդ մարզախաղերուն, որոնք տեղի ունեցան 20 Յուլիսէն մինչեւ 30 Յուլիս 2022, Հայաստան:

Մասնակցութիւն բերինք պասքէթի տղոց եւ աղջկանց խմբային եւ անհատական մրցումներուն, ինչպէս նաեւ ֆութպոլի, ֆութսալի եւ ճատրակի մրցումներուն: Մարզիկները այս մարզախաղերուն կողքին առիթ ունեցան ծանօթանալու հայրենիքի բնութեան, տեսարժան եւ պատմական վայրերուն: Այցելութիւնները սկսան Եռաբլուրով, ուր յաւերժութեան քունի մտած էին ամիսներ առաջ յանուն հայրենիքի պայծառութեան մարտնչող ազատամարտիկները, որոնք մէջ էին ՀՄԸՄ-ական շարք մը եղբայրներ: Սուրիոյ պատուիրակութիւնը յարգանքի տուրք մատուցեց հալէպահայ երեք նահատակ եղբայրներուն:

Սուրիոյ պատուիրակութիւնը ճաշերու, հաւաքներու եւ շրջապտոյտներու ընթացքին բարձր տրամադրութեամբ, երգերով ու կանչերով միշտ դրական մթնոլորտ ստեղծեց:

Եզակի էին Սուրիոյ պատուիրակութեան ձեռք բերած նուաճումները: Իրականութեան մէջ, պարտութիւններն ու յաղթանակները այնքան ալ էական չէին, մասնակցիլն էր կարեւորը: ՀՄԸՄ-ի յաղթանակը հայ հոգիին, հայու նկարագրին եւ հայ բազուկին ուժեղացումն է: Երբ մարզախաղերուն կը մասնակցին տարբեր քաղաքներէ հայրենիք ժամանած 678 մարզիկներ, արդէն դրական աշխատանքի ատարձ մը

կը պատրաստուի: Այս ատարձը կը հարստացնէ հայ կեանքն ու ՀՄԸՄ-ը: Ամենամեծ հպարտութիւնը այն էր, որ երբ ՀՄԸՄ-ական շապիկով եւ յատկապէս «ՀՄԸՄ-Սուրիա» շապիկով կը շրջէինք Երեւանի փողոցներով, կ'արժանանայինք մեծամասնութեան բարեւին կամ գնահատանքին, յատկապէս մեր պատուիրակութեան կը մօտենային սուրիահայ մարզիկներ, որոնք Հայաստան հաստատուած էին:

Ի ուրախութիւն բոլորիս վերադարձանք բաժակներով: ՀՄԸՄ-ի Հալէպի ճատրակի խումբը, որ կը մասնակցէր 2 մարզիկներով եւ 1 պատասխանատուով, այս մարզախաղերուն հանդիսացաւ համահայրենական 11-րդ մարզախաղերու ընդհանուր ախոյեանը: Ես անձամբ մասնակցից ըլլալով եւ ստանձնելով պատասխանատուութիւնը ճատրակի խումբին, անբացատրելի ուրախութիւն ապրեցայ մեր տարիներու աշխատանքին արդիւնքը տեսնելով: Մեր պասքէթի տղանքն ալ արժանացան երկրորդ դիրքին:

Մարզախաղերու ավարտին Սուրիոյ պատուիրակութիւնը վերադարձաւ ոսկիէ, արծաթէ եւ պրոնզէ մետալներով:

Թէեւ բաժանումը դժուար էր, սակայն յիշատակելի օրերով հարուստ մեր մասնակցութիւնը եզակի դրոշմ մը թողոյց մեր բոլորին հոգիին մէջ ու ամրապնդեց մեր կապը հայրենիքին ու մեր աշխարհացրիւ ազգակիցներուն հետ:

Երբ միասնական ենք, մեր մրցակցութիւնն անգամ առողջ եւ օգտակար կը դառնայ:

## ՍՓԻՒՔԸ...

Սկիզբ՝ էջ 4

շատ բան ըրած ենք ու արձանագրած՝ «Լաւ ըրած ենք»-ի ցանկին վրայ: Գիտենք, որ ինքնաբաւութիւնն ու տեղքայլը նահանջ կը նշանակեն ու ներելի չեն, մինչդէռ աշխարհն ու Հայ Կեանքը մեզ՝ բոլորս, Սփիւռքով ու հայրենիքով միասին, դրած է ճակատագրական վիճակներու, անոնց հետ քայլ պահելու հրամայականին դէմ յանդիման: Զենք կրնար նահանջել կամ աչք

փակել բազմացող մարտահրաւերներուն դիմաց: Մանաւանդ իրաւունք չունինք կրաւորական մալու մէկ կողմէ՝ Սփիւռքի հայրցներուն, միւս կողմէ՝ Հայաստան-Սփիւռք կամուրջներու թուլացման փորձերուն, իսկ նոյնքան կարեւոր ճակատի մը վրայ՝ Սփիւռքի անփոխարինելի յենարանը (նաեւ ամբողջական Հայաստանի վերականգնումի պայքարին հիմնաքարը) եղող՝ Հայաստան-Արցախ հայրենիքին սպառնացող վտանգներուն դիմաց:

(շար. 4 եւ վերջ)

## ՊԱՇՏՕՆԵԱՅԻ ԿԱՐԻՔ

Արամ Մանուկեան Ժողովրդային Տունը կարիքը ունի հետեւեալ պաշտօնեաներուն.

- Մատուցողի,
- Պահակի,
- Գինեպանի (Barman):

Փափաքողները կրնան ներկայանալ տնօրէնութեան, ամէն օր ժամը 12:00-էն մինչեւ 2:00:

Հեռաձայն՝ 4641881:

ԱՄՇ Տան

Խնամակալութիւն

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հանգուցեալ  
ԱՆԴՐԱՆԻԿ ՍԻՒԼԻԻՔՃԵԱՆԻ



Հանգուցեալի մահուան Ա. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 4 Սեպտեմբեր 2022-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ - Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին Սահակ Նալպանտեան «Տիգրանեան» սրահէն ներս:

## ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

Հանգուցեալ  
ՅԱՐՈՒԹ ԱՍՏԱՐՃԵԱՆԻ



Հանգուցեալի մահուան Ա. տարելիցի հոգեհանգստեան պաշտօնը պիտի կատարուի Կիրակի, 4 Սեպտեմբեր 2022-ին, յաւարտ Ս. եւ Անմահ Պատարագի, Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ մէջ, Նոր Գիւղ - Հալէպ:

Յետ հոգեհանգստեան արարողութեան ցաւակցութիւնները պիտի ընդունուին Եկեղեցւոյ ներքնասրահէն ներս:



### Պրիսմակետ

## ԱԳՈՒԻՆ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԵՋ



Մարուշ Երամյան

Սեւափետուր, կռկռան եւ շաղղակեր (լէշակեր), ագռաւը մեր մշակոյթին մէջ դժբախտութեան գուժկան կը նկատուի, թէեւ ոչ բուին տարողութեամբ:

Սակայն այլ մշակոյթներու մէջ ագռաւը այլ իմաստներ ունի, որոնց շնորհիւ է հաւանաբար, որ մտած է նուազ չափով նկարչութեան եւ առաւել չափով առասպելներու, դիցաբանութեան եւ գրականութեան մէջ, որպէս միջնորդ մահուան եւ կեանքին միջեւ: Որպէս այդպիսին, եղած է նաեւ խորհրդանշանը կորսուած հոգիներու:

Աւելի կանուխ շրջաններու, ինչպէս օրինակ հին յունական դիցաբանութեան մէջ, ագռաւները նախապէս ճերմակ եղած են, եւ գուշակութեան աստուծոյ՝ Ափոլլոյի խօսնակները: Աստուածը իր սիրուհին՝ Գորոնիսը լրտեսելու համար կը դրկէ ճերմակ ագռաւ մը, որ երբ կը վերադառնայ դաւաճանութեան լուրերով, Ափոլլոն, իր բարկութեան մէջ կը հրկիզէ գայն: Ագռաւին փետուրները վերջնականօրէն կը սեւնան:

Գրեթէ բոլոր մշակոյթներուն մէջ ալ՝ հնդկական, միջինարեւելեան, իսլամական, հարաւայինամերիկեան, անգլիական, կելտական, վայքինկներու թէ գերմանական, բոլորին մէջ ալ այս կամ այն չափով յիշուած է ագռաւը: Այս մշակոյթներէն մէկ մասին մէջ եթէ ագռաւը ժխտական ներկայութիւն է՝ մահուան կամ վատ դէպքերու գուժկան, այլ մշակոյթներու մէջ քաջութիւն եւ իմաստութիւն կը խորհրդանշէ. օրինակ՝ Յակինը (Նորտերէնով՝ մտածմունք) եւ Մասինը (Նորտերէնով՝ յիշողութիւն) ներկայացուած են որպէս ագռաւներու գոյգ մը, որոնք Օտին աստուածին համար աշխարհէն լուրեր կը բերեն: Օտինը այս գոյգին խօսելու կարողութիւն տուած էր: Օտին աստուածը երբեմն կը յիշուի նաեւ որպէս ագռաւ-աստուած:



Իրլանտական առասպելաբանութեան մէջ պատերազմի աստուածուհի Պատը կուռաքի՝ մը կերպարանքը առած սարսափ կը սփռէ եւ այլն:

Կալլէսեան բանասիրութեան մէջ ագռաւը կը յայտնուի միջնադարեան ձեռագիրներու մէջ:

Կ'ըսուի նաեւ թէ Արթըր թագաւորը չէ մեռած, պարզ ապէս իր հոգին մտած է կարմրակտուց եւ շիկոտն ագռաւի մը մարմնին մէջ:

Շուէտի մէջ սակայն

կ'ըսուի թէ ագռաւները սպանուած մարդոց հոգիներն են:

Արեւելքի պարագային Քուրանին մէջ կը յիշուի թէ ագռաւ մըն էր, որ ցոյց տուաւ Կայէնին, թէ ինչպէս պետք է ծածկէ իր սպանած եղբոր դին:

Մեզ հետաքրքրողը արդիական ժամանակակից գրականութեան մէջ «գտնուող» ագռաւն է, որ բազմաթիւ երեւումներ ունեցած է, ինչպէս Չարլզ Տիքընի «Պարնապի Բաճ» վեպին մէջ (1841) Կրիփ կուռապը կարելոր հերոս մըն է, կամ Շէյքսպիրի թէ՛ Օթելլոյին, թէ՛ Մագպետին մէջ ագռաւները կը յիշուին, կամ «Արիւնի Ովկիանոս Մը» վեպին հերոսներէն Միքա Վեր Լետը կը նկարագրուի՝ «ինչպէս պիտի երեւէր ագռաւ մը, եթէ մարդու կերպարանք առնէր»:

1500-ականներէն իսկ ագռաւի կերպարը կ'երեւի գրականութեան մէջ, եւ ոչ միայն գրականութեան այլ նաեւ երաժշտութեան, ինչպէս նշանաւոր պալլատին՝ «Երեք Կուռապները» (1611), ուր մեռած ասպետ մը կը ներկայացուի կուռապներու դիտանկիւնէն, որոնք կ'ուզեն յօշոտել զինք, բայց որուն հաւատարիմ արծիւն ու շունները կը պահեն դին:

Ագռաւը որպէս կերպար իր «փառքի» գագաթնակէտին հասած է Էտկար Ալլէն Փոյի «Ագռաւը» (The Raven) քերթուածով (հայերէնի թարգմանուած քանի մը բանաստեղծներու կողմէ. լաւագոյնը սակայն կը մնայ Աբրահամ Ալիքեանի տարբերակը, թէեւ Էմմա Կիրակոսեան 2018-ին իր գրած ատենախօսութեան մէջ [Յայաստանի Ամերիկեան Յամալսարան BA] ոչ իսկ կը յիշէ Աբրահամ Ալիքեանի անունը):

Փոյն աւելի քան հարիւր տարի ետք («Ագռաւը» գրուած է 1845-ին), թէտ Յիւզ անգլիացի բանաստեղծը կը հրատարակէ իր ամենէն նշանա-

Շար.՝ էջ 9 ➤

1-Արաբերէն ղուրապ բառէն, մոխրագոյնով սեւ, աւելի փոքր քան ագռաւը:

## ԶՐՈՅՑ՝ ԴՐԱԽՏԱՅԻՆ ԾՆՆԴԱՎԱՅՐԻՍ ՀԵՏ



Գեորգ Գեոհիկեան

Չարմանալի է կեանքը: Արդէն տասը եւ աւելի տարիներ անցած են քեզի հետ իմ վերջին հանդիպումէս: Անհաւատալի: Ի՞նչ արագաձագ է եղեր մեր ապրած այս դարը: Ու ամենօրեայ մտահոգութիւններու մէջ տակաւին քիչ առաջ էր, երբ կրկին յիշեցի մեր միասին անցուցած օրերը:

Հիմա, որ մօտս չես, ժամերս սկսած են երազին ալիքներուն մէջ ման գալ, ուր բոլոր յուշերդ եւ յուշերս հաճոյքով եւ երբեմն ալ տառապանքով լեցուն պահեր կը ստեղծեն:

Գաղտնիք մը չէ, որ երկուքս բաժնուած ենք իրարմէ, կամայ եւ նոյնչափ ալ ակամայ: Աւելի ճիշդ ես եմ, որ քեզմէ բաժնուեցայ կամովին եւ՝ նոյնքան ալ դժուար:

Կ'ըսեմ՝ հիմա որ դուն չկաս, աչքերուս դիմացս ես: Կան նաեւ բարեկամներուս, հարազատներուս դէմքերը, նկարներդ եւ յուշերդ,



որոնք մտածումներուս մէջ փայթած էի ամուր ու թարմ: Զեզմէ հեռանալէս ետք անցեալս դարձած էր յիշատակելի եւ վայելուչ:

Քեզմով չհագեցած ու քեզ պաշտած ըլլալու վայելքս ողողած էր հոգիս եւ եութիւնս: Մանուկի մը նման երեւակայութիւնս քեզմով սկսած է ու ապրած:

Հիմա աթոռիս վրայ ընկողմանած, թէ՛ կը կարդամ եւ թէ՛ ցած ձայնով երգի նման բան մը դուրս նետելով բերնէս կը փորձեմ այս տողերը գրել քեզի՛, շատերուն՝ «երագային», ուրիշներուն՝ «անկրկնելի», սակայն ինծի համար ե՛ւ սիրելի, ե՛ւ «դրախտային» ծննդավայր Յալէպս:

Կը գգամ, որ ինքնածին հրաւեր մըն է այս մէկը: Չեմ գիտեր ինչպէ՞ս եւ ինչո՞ւ յանկարծ մէջս այս գգացումը ծնած էր:

Անկասկած հարագատ հրաւեր մըն էր այս մէկը, կը համոզեմ ես զիս: Պարզ եւ սիրուն:

Ու կ'որոշեմ մտովին փողոցներուդ մէջ քալել համարձակ: Ինծի ընկերացողները յուշերս եւ երագներս են: Ագահօրէն կը փնտռեմ այն դէմքերը, որոնք գաղթեցին: Դէմքեր, որոնք շատ հաւանաբար պահուեցան ճակատագրին տակ: Դէմքեր, որոնք նաեւ կերտեցին գաղութը ու չտեսան իրենց իսկ կերտած գաղութին գարթումը:

Այնպէս կ'երեւի, թէ արդէն ինքնակոչ հազար միտքեր սկսած են ինծի գալ: Ու հետեւելով նկարներուս, կը շարունակեմ քալել փնտռելու համար մեր բոլոր թաղերն ու փողոցները, որոնք քիչ ժամանակ առաջ մարդոցմով եւ ինչո՞ւ չէ, նաեւ հայ աղմուկով կը վիտային: Յամառօրէն կը փնտռեմ դրացիներս, դասընկերներս, թաղեցիներս՝ հայն ու արաբը, քրիստոնէան եւ իսլամը, մեր տան մերձակայ վաճառատուները, անուշավաճառները, մսավաճառներուն ճանճերով լեցուն խանութները, «հոտաւետ» ձկնավաճառները, գիշերային պահակը, փողոցին անպիտան կատուները, ու նաեւ՝ աղտոտ ու փոշոտ փոքր նստարաններով պարտէզ ու երիտասարդներու սիրային փսփուքները, փողոցին մէջ դպրոցականներուն անմեղ ճիչերը, կանչերն ու քաղցր երգերը, որոնք օրերս լեցուցած էին մեծ խանդով:

Ագահօրէն կը փնտռեմ իմ հիւնը, իր աղուր անկեղծութեամբ ու պարզութեամբ որ կեանքս ալ արժեւորած էր:

Նուիրեալներու սերունդ մը կար, կ'ըսեմ մտովին եւ հպարտօրէն: Օրինակելի ու նոյնքան ալ պատմական: Զաղաքը, երկիրը, այդ հողը ինծի կը նային: Կար ժամանակ, որ հոն մենք երագին իսկ կը յաղթէինք: Այդ էր, որ մեզ կ'արբեցներ:

Ինք էր իրականութիւնը, իրապաշտ կը կրկնեմ ու կրկին կը վերադառնամ նկարներուն: Յաճախ կը մտածեմ, ուրկէ՞ եկած էինք եւ ենք, ի՞նչ ճամբայ կտրած ենք եւ ո՞ւր կ'երթանք կամ գացինք:

Ի՞նչ է իրականութիւնը եւ տեսանելին՝ կ'ըսեմ ես ինծի: Չեմ գիտեր: Սակայն կը կարծեմ, որ այս օրերուն Էական ու կարելոր է չկորսնցնել կենդանի կապը այդ իրականութեան հետ: Կ'ուզեմ գէթ ինքզինքս այս ձեւով մխիթարել:

Կը յիշե՞ս՝ քուկը եմ... աստղերուդ հետ կը քնանայինք: Անոնց հետ, մեր բակերը կամ տանիքներուն վրայ մեր դասերը կը սորվէինք: Հայերէնի կողքին արաբերէն սիրային երգ մըն ալ կը լսէինք եւ նոյնիսկ՝ կ'երգէինք: Ուրախ էինք, հայրենիքի չափ: Անաղարտ նայուածքով եւ ամչնալով կը սիրէինք: Է՛հ, կեանք:

Ո՞վ կրնայ հրաժարիլ իր ծննդավայրէն: Իւրաքանչիւր անհատի համար իր ծննդավայրը իրեն համար կեանք եւ պատմութիւն է: Հայրենիք է...: Հոն բոլորս ալ՝ մեծով ու պոտիկով, անշահախնդիր մասնակից կը դառ-

Շար.՝ էջ 9 ➤



## ԿԱՆԻՏԵԼ ՆՈՐ ԳՎՐԹԸ



Տոբոթր Նորայր Մանճեան

Արտագաղթը հայրենիքէն պարտադրաբար կամ կամաւոր հեռանալն է մէկ այլ երկիր՝ մշտապէս կամ ժամանակավորապէս բնակելու համար:

Մարդիկ կը դիմեն արտագաղթի գանազան պատճառներով՝ քաղաքական, տնտեսական, կենցաղային եւ այլն: Այստեղ կարելոր է պետութեան գործօնը աղետալի այս երեւոյթին ընթացքը կանխելու համար:

Հայաստան պատմութեան օրերէն եղած է թիրախ կողոպուտի ու թաւախի: Այդ թաւախը սկսած է այն օրէն, երբ մոնկոլներ, արաբներ ապա թուրք սելճուքներ եկած են Հայաստան աշխարհ: Նման ախորժակներով Հայաստան խուժած են նաեւ պարսիկները եւ Ռուսական Կայսրութիւնը:

Վերոնշեալ ազգերը, պետութիւնները իւրաքանչիւրը բացասական, երբեմն հայաջինջ քաղաքականութիւն վարած է, սակայն հայութիւնը կրցած է իր ինքնութիւնը պահպանել:

Հայեր Զրիստոսի օրերէն ներկայութիւն եղած են նաեւ Մերձաւոր Արեւելքի մէջ, որուն վկան են Սուրիոյ, Լիբանանի, Պաղեստինի, Եգիպտոսի, Յունաստանի, Կիպրոսի եւ Պարսկաստանի հայկական եկեղեցիներն ու վանքերը, սակայն Օսմանեան Թուրքիոյ կազմակերպած Հայոց Ցեղասպանութիւնը հանդիսացած է այդ տարիներուն հայկական Նոր գաղութներու յառաջացման հիմնական պատճառը:



Հայկական ամենակազմակերպուած եւ աշխոյժ գաղութները եղած են Սուրիոյ եւ Լիբանանի գաղութները, սակայն այս երկու մեծ գաղութները տարիներու ընթացքին ենթարկուեցան պատերազմի: Լիբանանն ու լիբանանցիք դիմակայեցին, բայց գաղութը նօսրացաւ արտագաղթին հետեւանքով: Նոյնը եղաւ Սուրիոյ պարագային: Վերջին տասը տարիներուն մեծ թիւով հայեր գաղթեցին ԱՄՆ եւ Քանադա, իսկ ստուար թիւ մըն ալ հայրենադարձ եղաւ:

Այս գաղութները, շնորհիւ հայկական միութիւններուն եւ Հայ եկեղեցւոյ ու իր գահակալներուն, կը շարունակեն իրենց ազգանուէր աշխատանքը:

Մեր երկու Սուրբ աթոռներու՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան անցեալի եւ ներկայի գահակալները աստուածատուր շնորհներու տեր կաթողիկոսներ են: Իրենց ազգային եւ կրօնական ծառայութեան կողքին, անոնք իրենց մայրենիին կողքին կը տիրապետեն բազում լեզուներու, ինչ որ հպարտութեամբ կը լեցնէ մեր հոգիները:

Առիթով մը լաթաքիւղակ ակնաբուժ, յոյն Ուղղափառ Եկեղեցւոյ քահանայ հայր Իսա Քոնյա պատմեց, թէ ներկայ եղած է Աւստրալիոյ Եկեղեցիներու համագումարին, ուր ՆՍՕՏՏ Արամ Ա. Կաթողիկոս սրբազան է անգլիացիներուն շարադրած եկեղեցական ժողովին հաղորդագրութիւնը:

Այո՛, եկեղեցին հայկական եղած է եւ է մեր հոգւոյն ծննդավայրը:

Ու թէեւ մենք որպէս ազգ կորսնցուցած ենք հայրենիք, հայրենի հող, սակայն պահպանած ենք մեր ինքնութիւնը շնորհիւ մեր հաւատքին ու կամքին:

Եթէ եկեղեցին եղած է հոգեւոր տաճար, հայ դպրոցը եղած է հայ ազգին Մտրոպեան տաճարը, ուր հայ սերունդներ ստացած են ու կը ստանան հայեցի դաստիարակութիւն:

Այսօր կ'ապրինք ճակատագրական պահեր: Համաճարակ եւ ահաւասիկ պատերազմ... Նոր գաղթականներ, Նոր գաղութներ կը յառաջանան:

Ռուսիա-Ուքրանիոյ պատերազմին հետեւանքով կրկին հայկական գաղութներ կը նօսրանան եւ կրկին գաղթականներու պատկեր կը պարզուի:

Արցախի պատերազմն ու հողերու յանձնումը կրկին գաղթի պարտադրանքին տակ կը ղնեն մեր հայրենակիցները:

Այս բոլորը կարելի է դիմակայել օգտագործելով ինքնապաշտպանութեան օրէնքները: Այդ օրէնքները արդիական կապի միջոցներն են: Առցանց կապերով կրնանք օգնել մէկ միւսին տարբեր հարցերու լուծումներ գտնելով:

Այստեղ կ'ուզեմ իշխեցնել, որ նշուած հայկական համայնքները, թէեւ նօսրացած են, սակայն իրենց ինքնութիւնը կը պահեն այս անբնական պայմաններուն մէջ, ուստի կարիքը ունին համայն գաղթօջախներու նիւթական եւ բարոյական օգնութեան:

Նոյնն է պարագան Արցախի հայութեան, որ բարոյական եւ նիւթական մեր կարելոր աջակցութեան կարիքը ունի:

Իսկ մենք, անմար պահելու համար հայկական կանթեղը, որը հայութեան համագաղթին ուժին համադրման կարիքը ունինք այսօր՝ աւելի քան երբեք:

Մէկտեղուած մեր ուժով կրնանք յաղթահարել տարբեր դժուարութիւններ:

## ՀՅԴ ՀԱՅԱՍՏԱՆԻ...

Սկիզբ՝ էջ 1

մաւորելու, համակարգային բարեփոխումներ իրականացնելու, Հայոց բանակի եւ հայ ժողովրդի մարտական ոգին վերականգնելու փոխարէն, Հայաստանի իշխանութիւնները շարունակում են հերթական նախաձեռնութեամբ փոշիացնել եղած ներուժը:

Իշխանութիւնների կողմից հանրային քննարկման ներկայացուած «Հինուորական ծառայութեան եւ զինծառայողի կարգավիճակի մասին» օրէնքում փոփոխութիւններ եւ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետութեան օրէնքի նախագիծը հեռու գնացող ծանր հարուած է երկրի անվտանգային միասնական համակարգին, հանրային համերաշխութեանը, հայրենիքի նկատմամբ համաժողովրդական նուիրումներին ու մեզ համար կենսական «Ազգ-բանակ» գաղափարին:

Իրականում սա մեր մեծագոյն ձեռքբերումներից մէկի՝ արցախեան ազատամարտով, հազարաւոր հայ նուիրեալների կենքի եւ համագաղթային նուիրումի գնով կենքի կոչուած՝ համաժողովրդական բանակի գաղափարի մերժումն է, մեր պետականութեան հեռանկարը կասկածի դնող քայլ:

Ըստ էութեան, խոշոր գումարի դիմաց վերացում է Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեամբ ամրագրուած պարտա-

դիր զինուորական ծառայութեան համակարգը, էլ աւելի թուլացնելով 44-օրեայ պատերազմին յաջորդած հանրային եւ պետական դիմադրողականութիւնը: Մեր ազգային եւ պետական շահերին հակասող այն հակասահմանադրական նախագծով իշխանութիւնները խորացնելու են ներագաղթային պառակտումն ու ընկերային բեւեռութիւնը, երկրում ճեւաւորելով ոչ հաւասար իրաւունքներով եւ պարտականութիւններով հանրային շերտեր:

Արձանագրելով, որ փաստաբար կուտակուած ներկայացրել ենք եւ շարունակելու ենք բարձրաձայնել այս նախաձեռնութեան վտանգաւորութիւնը, ՀՀ-ի Հայաստանի Գերագոյն Մարմինը վերահաստատում է իր աներկբայ վերաբերմունքը Հայաստանի Հանրապետութեան անվտանգութեան գլխաւոր երաշխաւոր Հայաստանի Հանրապետութեան զինուած ուժերի համաժողովրդական, բոլորի համար պարտադիր զինապարտութեամբ համակարգի պահպանման հարցում:

Կոչ ենք անում հանրային լայն շրջանակներին, մեր ողջ հասարակութեանը ընդդիմանալ երկիրը հետեւողականօրէն կազմաքանդման տանող այս իշխանութիւններին, նրանց ապագա գային նախաձեռնութիւններին, թոյլ չտալ երկիրը գրկել պաշտպանութեան, իսկ նրա քաղաքացիներին սեփական հայրենիքում արժանապատիւ, անվտանգ եւ խաղաղ ապրելու հեռանկարից: Միասին կարող ենք»:

**«Գանձասար» շնորհակալութեամբ ստացաւ Պերճուհի Աւետեանի**

**«ՄԱՏՆԱԶԵՏՔԵՐ»**

**գիրքը, հրատարակութեամբ «Գեորգ Մելիխոնեցի Գրական Մրցանակ»-ի, թիւ 103: Անթիլիաս, 2021:**

**«ԳԱՆՁԱՍԱՐ» ՊԱՇՏՈՆԱԹԵՐԹԻ ԱՆՁՆԱԿԱԶՍ**

Խմբագիր՝ Չարմիկ Զիւլփօշեան-Պողիկեան  
Սրբագրիչներ՝ Նուշիկ Սողոյեան-Առաքելեան  
Վեհան Պարսումեան

Ձեւաւորող՝ Յովսէփ Զալոյլեան  
Գրաշար՝ Անի Թոփալեան-Սարուխան  
Արաբերէն լուրերու թարգմանիչ՝ Մարեն Պապեան-Աղայեկեան  
Կայքէջի պատասխանատու՝ Ալօ Պողոսեան  
Լուրերու պատասխանատու՝ Լուսին Ապաճեան-Զիւլփօշեան  
Հաշուապահ՝ Յովիկ Պարսումեան 0957 953 811

- Ծանուցողներէն եւ աշխատակիցներէն կը խնդրուի ծանուցումներն ու յօդուածները խմբագրատուն ուղարկել ամենէն ուշը Երկուշաբթի օրերը:  
- Նախընտրելի է յօդուածներն ու թղթակցութիւնները ուղարկել գրաշարուած:  
- Խմբագրատուն ուղարկուած նիւթերը, հրատարակուին կամ ոչ, չեն վերադարձուիր:  
- Խմբագրութեան վերապահուած է ստացուած յօդուածներու հրատարակելու կամ չհրատարակելու որոշումը:  
- Ձեր ծանուցումներն ու յայտարարութիւնները կարելի է հրապարակել «Գանձասար»-ի տպագիր տարբերակին եւ կայքէջին միջոցով, կապ հաստատելով թերթիս հաշուապահին հետ:



## Թուրքիոյ նուրջ

### ԹՈՒՐԵՒՅ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԳՈՂՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ՅԱՅՏՆԱԾ Է ԲԵՐԶՈՐԸ, ԱՂԱՒՆՈՆ ԵՒ ՍՈՒՍԸ ԱՏՐՊԷՅՃԱՆԻՆ ՅԱՆՉՆԵԼՈՒ ԱՌՆՉՈՒԹԵԱՄԲ

Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարութիւնը իր գոհունակութիւնը յայտնած է Արցախի 44-օրեայ պատերազմին հետեւանքով Ատրպէյճանի վերահսկողութեան տակ անցած Բաշաթաղի շրջանի Բերձոր քաղաքը, ինչպէս նաեւ Աղաւնօ եւ Սուս գիւղերը Ատրպէյճանին յանձնելու ամենաբացարձակ պայմաններով:

«Մենք յոյսով ենք, որ այս քայլը, որ կարելի էր քայլ դարձնել Է Զարաթային Կովկասի մէջ խաղաղութեան եւ կայունութեան հաստատման համար, կը նպաստէ տարածաշրջանային կայուն կարգաւորման, ինչպէս նաեւ հայատարայեցական յարաբերութիւններու բարելաւման: Թուրքիան, ինչպէս անցեալին, կը շարունակէ աջակցիլ եղբայրական Ատրպէյճանի «տարածքային ամբողջականութեան» (չակերտները՝ «Գանձասար»-ին) եւ ինքնիշխանութեան», ըսուած է Թուրքիոյ Արտաքին Գործոց Նախարարութեան մէջ:



Նշենք, որ Ատրպէյճանական բանակը Ուրբաթ օր մտաւ ու տեղակայուած է Արցախի Բաշաթաղի շրջանի Բերձոր վարչական կեդրոնին մէջ, Աղաւնօ եւ Սուս գիւղերուն մէջ, ինչ որ յայտարարած էր Ատրպէյճանի Նախագահ Իլհամ Ալիեւը:

Յիշեցնենք, որ 5 Օգոստոսին յայտնի դարձած էր, որ Արցախի տարածքային կառավարման եւ ենթակառուցներու Նախարար Յայկ Խանումեան Բաշաթաղի շրջանի Աղաւնօ գիւղի բնակչութեան, համայնքի եւ շրջանի իշխանութեան ներկայացուցիչներուն հետ քննարկած էր Աղաւնոյի, Ներքին Սուսի եւ Բերձորի բնակչութեան՝ մինչեւ սոյն թուականի 25 Օգոստոսը տարհանման հարցերը:

### ԱԳՈՒԻՆ...

Սկիզբ՝ էջ 7

Լոր քերթողագիրը՝ «Ագռաւ. Ագռաւին կեանքէն ու երգերէն» (Crow: From the Life and Songs of the Crow) խորագրով, 1970-ին:

Յիւզէն գրեթէ յիսուն տարի ետք, երիտասարդ ամերիկացի մը՝ Max Porter կը հրատարակէ (Grief Is the Thing With Feathers) «Ցաւը Փետուրներով Բանն է» քերթողագիրը, որ հեղինակին առաջին գիրքը ըլլալուն, իրեն բանաստեղծի հռոչակ կ'ապահովէ:

Այս ձեւով կ'ունենանք իրարմէ այնքան հեռու երեք գործեր, որոնց առանցքը այս համեստ թըռչնազգին է՝ ագռաւը:

Շատ գրուած է Թէտ Յիւզի «Ագռաւ»-ին մասին, որ խորքին մէջ մարտահրաւեր մըն է նետուած քրիստոնէութեան եւ մարդկութեան դէմքին:

Սակայն Մաքս Փորթըրի գիրքը աւելի կը սրէ հակադրութիւնը մահին եւ անոր հակադրողին՝ սիրոյն եւ արուեստին միջեւ:

Այստեղ Ագռաւը կարծեք դուրս ելած Յիւզի գիրքէն, եկեր է հոգ տանելու այս ընտանիքին, ուր մօր մահուան սուգով ցնցուած հայր մը, այնքան անկարող կը գգայ ինքզինք իր երկու գաւակներուն առջեւ:

\*\*\*

Ագռաւը միջոց մըն է ցոյց տալու արուեստին անվիճելի ազդեցութիւնը, տոմիսոյի քարերուն կրած ազդեցութեան նման, շա՛տ հեռուներէն եկող շարժումի մը: Արուեստի թէ գրականութեան մղոնը կուգայ եւ իր հետ կատարելութիւն կը բերէ, բայց արդէն ձեւափոխուած, ինչպէս ինչ հարցազրոյցի մը մէջ պիտի ըսէր ժամանակակից գրագետը՝ «ո՞վ կրնայ իմանալ այն մեծագոյն ազդեցութիւնը, գոր կրէր եմ Միսաք Մեծարեցէն»:

Յին «Բագին»ներէն մէկուն մէջ գրագետ մը - որքան կը յիշեմ հիմա՝ իր քաղաքի գրագետ մը - գրած էր ագռաւներու ընտանեկան կայտերուն մասին եւ նկարագրած իր ընտանիքին դաւաճանած ագռաւի մը ստացած պատիժը, երամին կողմէ:

Եթէ տունս ըլլայի, պիտի կարենայի փնտռել-գտնել այդ գրութիւնը եւ հոս դնել որպէս նմուշ մեր գրականութեան մէջ ագռաւներու մասին, որովհետեւ չեմ գիտեր ինչո՞ւ, մեր մօտ ագռաւն ու բուն, երկուքն ալ չար բախտ բերողի, գուժկանի համբաւ ունին, մինչ Երոպայի մէջ, մանաւանդ եւրոպական առասպելներուն մէջ անոնք իմաստութիւն կը խորհրդանշեն:

Եւ այդ ձեւով է հաւանաբար, որ ագռաւը մտեր է արեւմտեան գրականութեան մէջ:

## ՊԱՏԱՆԵԿԱՆ ԱՆԿԻՆ

### ԻՐԱԿՈՒՄԸ, ԹԵ ԸՆԴՀԱՆՐԱՅՁԾ ՀԱՄՈՉՈՒՄՆԵՐ



Մայր Գեղեցեան

Երբեմն ուսուցիչ-ուսուցչուհիներ կեցուածք կ'որդեգրեն այն աշակերտներուն հանդէպ, որոնք երեւոյթի մը շուրջ իրենց կարծիքը կամ ընդվզումը կը յայտնեն ինքնավստահութեամբ: Եղած են դէպքեր, երբ ուսուցիչներ յանդիմանած են աշակերտները իրենց համարձակ արտայայտութեան համար:

Երբ փոքր էիք, մեծերը յաճախ կը շեշտէին, որ աշակերտի մը չէ արտօնուած հակադարձել ուսուցիչին, նոյնիսկ եթէ ուսուցիչը աշակերտի մը

պատուութիւնը վիրաւորելը: Այս մէկը վատ անդրադարձ կ'ունենայ աշակերտին հոգեկան առողջութեան վրայ, պատանիին ինքնավստահութիւնը կը քայքայուի եւ ան իր կարծիքը համարձակօրէն արտայայտելու համարձակութիւնը կը կորսնցնէ, ինչ որ ժխտականօրէն կ'արտացոլայ իր անձնական կեանքին մէջ անգամ:

Նմանօրինակ պարագաներու ցանկալի է, որ ուսուցիչը նախ առիթ տայ աշակերտին իր տեսակետը



ընթացքը քննադատէ առանց հասկնալու անոր տուն տուող պատճառները եւ անտեղի յանդիմանէ զինք:

Աշակերտին ուղղուած վիրաւորական եւ նուաստացուցիչ խօսքերը, սակայն, պատանիին մատուցած հոգին խորապէս կը խոցեն եւ երբեմն ինքնաբերաբար հակազդելու ցանկութիւն կը յառաջացնեն: Բոլորովին տարբեր բաներ են պատանիին սխալը ուղղելը կամ այդ սխալին առիթով պատանիին արժանա-

պաշտպանելու, իսկ աշակերտը արտայայտուի ճիշդ ոճով, քաղաքավարութեան սահմաններուն մէջ: Այնուհետեւ ուսուցչուհին իր ցուցմունքները փոխանցէ:

Այս պարագային աշակերտը ըմբոստանալու կարիք չի գգար, այլ պարզապէս ինքզինք կ'արդարացնէ, ու այս արդարացումը, ազատ արտայայտութիւնը պէտք է գնահատանքի եւ ոչ թէ յանդիմանութեան արժանի ըլլան առողջ դաստիարակներու եւ ուսուցիչներու կողմէ:

### ԶՐՈՅՑ՝...

Սկիզբ՝ էջ 7

Նայինք մեր գաղութի հաւաքական քաղցր աշխատանքներուն՝ սքանչելի հաւատարմութեամբ, իրաքանչիւրս իր դերին գիտակցելով եւ կեանքին հանդէպ սիրով լեցուն բախտամեներով:

Այս մէկը գաղտնիք մը չէ, ո՛չ ալ գզացական պոռթկում:

Ու յայտնեմ, որ հոն՝ մօտոք, այցելութեանս օրերուն, քու իսկ յարկիդ տակ, իւրաքանչիւր արտասանուած բառ, խօսք, ակնարկ, նախադասութիւն եւ կամ դրուագ, մինչեւ այսօր տակաւին իր հարազատ արձագանգը ձգած է ոչ միայն ականջիս մէջ, այլեւ՝ կեանքիս բաց օղակներէն ներս: Դուն տարբեր գոյն եւ դիմագիծ ունիս քեզ լաւ ճանչցողին համար, կը կրկնեմ ու սիրալիր ձեւով մըն ալ կ'աւելցնեմ, թէ իմ ապ-

րած ու ճանչցած Յալեպս, ծննդավայրս ըլլալէ աւելի, ինձի եւ մանաւանդ ինձի նման շատերուն համար հայրենիք ալ եղած էր:

- Յալեպը Յայաստանս էր, կ'ըսէի ու տակաւին կը շարունակեմ ըսել հայարտօրէն եւ բարձրաձայն, ու կ'աւելցնեմ՝ ան նոյնիսկ ամբողջ Միջին Արեւելքի հայութեան Յայաստանն էր, այն օրերուն, երբ մեր հայրենիքը տակաւին անկախ չէր:

Ու այս բոլորին իբրեւ հարազատ արդիւնք՝ կրկին կեանքս իր հաճելի գարունը կ'ապրի: Անոր համար է, որ ներքնապէս ուրախ էի:

\*\*\*

Իսկ իմա, այս օրերուն, ի՞նչ ուրախութիւն... որովհետեւ սառած ու մոռցուած յուշերուս ծիւսիսալը տեսած էի ու նոյն այդ մարած անցեալէն նոր կեանքի մը բազկերակը լսած, որ կարծես դրախտէ փրցուած պատկեր մը ըլլար:

Ու այդ դրախտը՝ Յալեպս էր...:



## ԻՆՉ Կ'ԸՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ

### ԽՈՅ



Աշխատանքի նոր առաջարկ մը պատճառ պիտի դառնայ, որ դուք հրաժարիք ձեր ներկայ գործէն ու անլի լաւ վարձատրութեամբ եւ պայմաններով գործի մը հրաւիրուիք:

### ՑՈՒԼ



Միրային ձեր կեանքը պիտի գունաւորուի այս շրջանին նոր առաջարկով մը, ինչ որ բարձր տրամադրութեամբ պիտի օժտէ ձեզ, նոր թափ ու եռանդ հարդելով ձեր կեանքին:

### ԵՐԿՈՒՐԵԱԿ



Ձեր յաջողութիւնները նախանձը կը շարժեն ձեզ շրջապատող կարգ մը մարդոց, ուստի գաղտնապահ եղէ՛ք ու մի՛ յայտարարեք ձեր նուաճումները:

### ԽԵՑՊԵՏԻՆ



Ընտանեկան որոշ հարցեր պիտի դիմագրաւէք տնտեսական դժուարութեան պատճառով: Առիթ մի՛ տաք, որ մարդիկ միջամտեն ձեր հարցերուն: Անձամբ լուծման միջոցներ որոնեցէ՛ք:

### ԱՌԻԾ



Սահմանափակ մտածողութեամբ մարդիկ յաճախ կը կաշկանդեն ձեր ազատ միտքն ու թռիչքը: Ինքնավստահ եղէ՛ք ու պիտի սլանաք դէպի յաջողութիւններու նոր հորիզոններ:

### ԿՈՅՍ



Արուեստով զբաղիլը ձեր հոգեկան աշխարհը պիտի հարստացնէ: Առօրեայ աշխատանքներու բեռը պատճառ թող չդառնայ, որ հեռանաք արուեստի ծով աշխարհէն:

### ԿԵՒՈՋ



Դուք ձեզ մի՛ ծանրաբեռնէք, հանգիստի ձեր ժամերը մի՛ գոհեք ուրիշները գոհ ձգելու համար: Նախքան վերամուտը արձակուրդը լիովին վայելեցէ՛ք:

### ԿԱՐԻՃ



Յատուկ անձ մը իր սերը պիտի խոստովանի ձեզի ու հրճուանքի եզակի պահերով պիտի լեցնէ ձեր հոգեկան աշխարհը:

### ԱՂԵՂՆԱՒՈՐ



Տնտեսական ծանր պայմաններու մէջ եք: Յուսախաբ ըլլալու փոխարէն լուծումներ որոնեցէ՛ք ու պիտի յաջողիք յարթահարել այս ծանր օրերը:

### ԱՅՏԵՂՋԻՐ



Հաւաքական աշխատանքի մէջ երեւելի պիտի դառնան ձեր կազմակերպական կարողութիւններն ու լայնախոհութիւնը: Բամբասկոտ մարդոցմէ հեռու մնացէ՛ք:

### ՋՐՅՈՍ




Ձեր հարուստ միտքին ու նոր գաղափարներուն շնորհիւ ձեր շրջապատին վստահութեան պիտի արժանանաք: Միտքերը գործի վերածելու առիթներ ստեղծեցէ՛ք:

### ՁՈՒԿ



Այս շաբաթ աշխատանքի նոր ծրագիրներ պիտի մշակէք ու ձեր գործերը յաջողութեամբ պիտի պսակուին: Տնտեսող եղէ՛ք մինչեւ ձեր եկամուտին բարելաւումը: Օ՛ն յառաջ:



Սոնա Տէր Պողոսեան-Տարաքճեան

## ՀԱԼԷՊԻ ԿԱԻՐ

Կաւը հողի տեսակ մըն է, որուն գոյնը կը տատանի մոխրագոյնի եւ կարմիրի միջեւ: Ան կ'օգտագործուի մազի գօրացման եւ մաշկային հիւանդութիւններու բուժման համար:

Կաւը բազմատեսակ օգտակարութիւն ունի: Ան կը փափուկցնէ եւ հարթ կը դարձնէ մազը: Կ'օգտագործուի յատկապէս իւղոտ կամ չոր մազ ունեցողներուն համար: Կաւը նաեւ կը փափուկցնէ մաշկը:



Մաշկաբաններ յաճախ կ'օգտագործեն կաւը փոխան դեղորայքի, որպէս կնճիռներու կանխարգիլման եւ մորթը մաքրելու բնական միջոց:

Կաւին ծննդավայրը Հայաստանի Արարատի մարզի «Պիլուն»-ը կը համարուի: Հայաստան քան միջին հեռավորութեան վրայ գըտնուող այս գիւղին մէջ կիներ հին ժամանակներէ ի վեր կաւի՝ պիլունի, առեւտուրով կը զբաղին: Նոյնիսկ տղամարդիկ կ'օգտագործեն կաւը լոգանքի ընթացքին, որպէս գլխու եւ մարմնի մաշկը մաքրող լաւագոյն միջոց:

Պիլունը այն հողն է, որ հարուստ է հանքային աղերով, հանքանիւթերով, կենսասիւթերով, երկաթով, թթուածինով, մակնիզիումով, կրածինով եւ եթերային իւղերով:

Պիլունէն կազմուած կաւը ամուր քար մըն է՝ որ դիրաւ կը կոտորուի եւ կը վերածուի փոշիի:

### ԿԱԻՐ ԱՌԱՄԵԼՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- Իւղոտ մաշկն ու մազը կը չորցնէ:
  - Կը հարթեցնէ մազը, կը սնուցանէ եւ փայլք կը հարդողէ անոր:
  - Կը պաշտպանէ մազը եւ կը վերացնէ թեփը:
  - Կը նպաստէ մաշկի բջիջներու նորոգութեան:
  - Կը հեռացնէ մորթին սեւ կէտերը, կնճիռները եւ կը վերացնէ մորթին մահացած բջիջները:
  - Դեմքին կը հարդողէ թարմութիւն եւ փայլք:
  - Կը բուժէ նաեւ որովայնի թուլացումը, մաշկի ուռուցքները եւ յօդացաւը:
  - Ան կը հեռացնէ բշտիկները եւ անոնց հետքը երկար ժամանակի վրայ:
- Հակառակ այս բոլոր առաւելութիւններուն, կաւի օգտագործումը այսօր դարձած է հազուադէպ: Ուստի խորհուրդ կու տանք նոր սերունդին օգտագործելու կաւը՝ մազը եւ գլխու մաշկը առողջ պահելու համար, փոխանակ վնասակար քիմիական սուղ դեղերու կամ քսուկներու:



### ԻՆՉՊԷՍ ՕԳՏԱԳՈՐԾԵԼ ԿԱԻՐ

Պիլունի ամուր քարերը կը դնենք եռացած ջուրին մէջ, տասը վայրկեան վերջ ձեռքով լաւ մը կը հարենք եւ այս լուծուածը կը քսենք մեր գլխու մաշկին: Քանի մը վայրկեան վերջ, գլուխը կը լուանք գաղջ ջուրով:

Հին ժամանակ կիները բաղնիքներու մէջ նոյն այս կաւին վարդի չոր տերեւներ խառնելով գնդակի կամ օղակի կը վերածեն եւ լոգանքի ատեն իբրեւ օճառ կը գործածեն՝ գլխու մազը մաքրելու համար:

## ԴԵՄՔԸ ՁՄԵՐՈՒԿՈՎ ՄԱՔՐԵԼՈՒ ԲՆԱԿԱՆ ԲԱՂԱԴԻՄՏՈՄՍԵՐ

Ա, ՍԵ ԵՎ ՊԵՏ կենսասիւթերով հարուստ ձմերուկը դեմքը կը պաշտպանէ կանխահաս ծերացումէ, քանի որ ան կը խթանէ քոլլաժէնի արտադրութիւնը: Ձմերուկը դիւրին եւ արագ միջոց մըն է դեմքը մաքրելու եւ խոնաւցնելու, մանաւանդ՝ ծովափէն վերադարձին:

Ա) Փոս ամանի մը մէջ ձմերուկի կտոր մը ճգմեցէ՛ք, ապուրի դգալ մը մածուն անելուցէ՛ք եւ թանձրուկը տարածեցէ՛ք ձեր դեմքին վրայ: Սպասեցէ՛ք 20 վայրկեան, ապա լուացէ՛ք ձեր երեսը:

Բ) Հարեցէ՛ք 100 կրամ պանակը, անելուցէ՛ք 1 ճաշի դգալ ձմերուկի հիւթ: Այս թանձրուկը նախատեսուած է չոր մաշկի խնամքին համար:

Գ) Թերեցէ՛ք ձմերուկին միջուկը, 2 ժամ վերջ գտեցէ՛ք հիւթը եւ անոր մէջ լուծեցէ՛ք 1 ճ/դ մեղր, 1 թ/դ աղ եւ 200 մլ. օդի: Մաքրեցէ՛ք դեմքը, ապա քսեցէ՛ք այս թանձրուկը եւ 2 ժամ վերջ լուացէ՛ք դեմքը:





## Մարզական



Ռաֆֆի Սիլահեան

### ՏԵՂԱԿԱՆ

#### ԼՈՒՐԵՐ ՍՈՒՐԻՈՅ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԵՆ

- Սուրիոյ ֆուտբոլի Դաշնութիւնը Կիրակի օր մամլոյ ասուլիսի մը ընթացքին պաշտօնապէս ներկայացուց ֆուտբոլի տղոց Ա. հաւաքականի նորանշանակ մարզիչ Զուսամ Սայէտը, որ մէկ տարուան պայմանագրութեամբ ստանձնեց հաւաքականի մարզիչութեան պաշտօնը:

- Զալէպի Իթթիհատ Ահլի ակումբը պատրաստ է տղոց խումբին մարզիչ որոշեց արժանաւորի Պետրաչին, որ նախապէս, տարիներ առաջ, դարձեալ մարզած էր Զալէպի ակումբը:

- Սուրիոյ ֆուտբոլի հանրապետական բաժակի աւարտական մրցումին, Դամասկոսի մէջ Զալէպի Իթթիհատ Ահլին պարտութեան մատնելով Զոմսի Ուասպէն տիրացաւ բաժակին: Յիշե՛ք, որ այս 10-րդ անգամն է որ Ահլին ձեռք կը ձգէ տյն բաժակը:



### ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

#### ՊԵՆՉԵՄԱՆ ՏԱՐՈՒՄՆ ԼՍԻՊՈՅՆ ԽԱՂԱՅՈՂ, ԻՍԿ ԱՆՇԵԼՈՒՅՆ՝ ՄԱՐԶԻՉ

Սպանիոյ ախոյեան եւ Չեմփիընը լիկի գաւաթակիր, Եւրոպայի սուփըր գաւաթակիր Ռեալ Մատրիտի եւ աշխարհի ախոյեան Ֆրանսայի հաւաքականի 34-ամեայ յարձակող Քարիմ Պենզեման վերջին մրցաշրջանին իր արձանագրած արդիւնքներուն համար համարուեցաւ տարուան լաւագոյն ֆուտբոլիստը եւ ստացաւ ՈւեֆԱ-ի պարգեւը:



Մրցանակին մաս կազմեցին նաեւ Ռեալի պեւիքացի դարպասապահ Տիֆո Քուրտուան եւ Անգլիոյ ախոյեան Մանչեսթըր Սիթիի պեւիքացի կիսապաշտպան Բեւին տէ Փրինսէն:

Պենզեման այս տարի Արքայական ակումբին հետ 5-րդ անգամ ըլլալով նուաճեց Չեմփիընը լիկի գաւաթը եւ 15 կոլով ճանչցուեցաւ իր մրցաշարի լաւագոյն սքորիստ:

Նոյն մրցանակին մարզիչներուն կոչումը մնաց նաեւ Ռեալ Մատրիտին, որուն մարզիչ՝ Գարլօ Անշելոթին ընտրուեցաւ տարուան լաւագոյնը: Ան միակ մարզիչն է, որ յաջողած է չորս անգամ տիրանալ Չեմփիընը լիկի մրցանակին՝ տարբեր ակումբներու հետ:

#### ՌՈՆԱԼՏՕ ՊԻՏԻ ՏԵՂԱՓՈՒՆՈՒԻ ՆԱՓՈՒԽ

Անգլիական Մանչեսթըր Ինսայթըտի 37-ամեայ փորթուկալցի խաղացող Քրիստիանօ Ռոնալտօ կարելիութիւն ունի տեղափոխուելու Իտալիոյ Նափոլի ակումբ:



Ըստ La Gazzetta dello Sport-ին, Մանչեսթըր Ինսայթըտը համաձայնած է մէկ տարուան վարձակալութեամբ Ռոնալտօյին առիթը տալ մաս կազմելու Նափոլիին: Նոյն գործարքով Մանչեսթըր Ինսայթըտ կը տեղափոխուի Նափոլիի կիճերիացի յարձակողական խաղացող Վիքթոր Օսիմենը: Յիշե՛ք, որ Նափոլիի իտալացի գլխաւոր մարզիչ Լուչանօ Սփալեթին յայտարարեց, որ ամեն մարզիչ կը փափաքի կազմին մէջ ունենալ Ռոնալտօյին մակարդակով խաղացող մը:

#### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 405)

Պատրաստեց՝ Մարինա ԶիլԱբօշեան-Պօղիկեան

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1												
2												
3												
4												
5												
6												
7												
8												
9												
10												
11												
12												

#### Չորիզոնական

- Շող արձակել: Ոչ հասուն:
- Ցուցական դերանուն:
- Սուրիոյ Պատանեկան Միութեան այս տարուան բանակումին անունը:
- Հայկական լեռնաշխարհի ամենաբարձր լեռը: Հակառակ՝ ծառի բուսի ստորին մասը:
- Հակառակ՝ դէմքի արդուգ արդի ներկ: Թանկագին ջինջ ապակի:
- Յարձակող ամբոխ: Հակառակ՝ առարկայ:
- «Մշակ» թերթին մէջ երաժշտական քննադատական յօդուածներով հանդէս եկած հայ երաժշտագետ:
- 470: Հակառակ՝ սուրիական լրատու գործակալութիւն:
- Ս. Պատարագի բաժակ: Ամրանալու ռազմական յենարան:
- Կռթնելու ծառայող մաս: Սիամանթոյի ծննդավայրը:
- Ձայնանիշ մը: Բարձր ու լայն ալիք: Անձնական դերանուն:
- Հայ երգչուհի: Տառի մը անունը:

#### Ուղղահայեաց

- Թել մանելու գործիք: Խառնատառ՝ բեռան կառք:
- Արական անուն: Անառակ վարքի տէր:
- Աւետիս Ահարոնեանի պատմուածքներու ժողովածուներէն. «Ազատութեան .....»:
- Լոյս, յայտնութիւն: Ռամկօրէն՝ այր:
- Օդագնացութեան եւ տիեզերական հետազոտութիւններու ազգային գործակալութիւն: Հակառակ՝ 203: Կրկնուած բաղաձայններ:
- Հակառակ՝ 4600: Հակառակ՝ շրջանակաձեւ: Քէն:
- Գիշերային թռչուն մը: Ճամբայ:
- Ձայնանիշ մը: Արեւի աստուածը:
- Տառի մը հարեւանները: Ժողովրդային ասացուածքը կ'ըսէ. «..... չծծողը իր ծունկը կը ծծէ»:
- Ժողովրդի իմաստութիւնը մարմնացնող անձ: Ս. Գրիգոր Լուսաւորիչի հայրը:
- Աղբիւր: Յոգնակերտ մասնիկ: Հրաշագործ սրբուհի մը, որուն անունով Եագուպիէի մէջ եկեղեցի կը գտնուի:
- Մոլեգին: Իրերայաջորդ տառեր:

#### ԽԱԶԲԱՌ (ՄԽ 404)

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
1	բ	ա	լ	ա	պ	ե	խ		ա	ս	տ	ղ
2	ե	պ	ի	փ	ա	ն		ա	ր	փ	ի	
3	թ	ա	մ		խ	թ	ա	ն		ի	կ	
4	ա	ռ			ա	ա		կ	ո	ւ	ն	
5	ն	ի		ա	ր	դ		ա	ռ	ի	թ	
6	ի	կ		ն	ա	ր	ե	կ		ք	կ	ա
7	ա		մ	ա	կ	ե	ր	ե	ս	ը	թ	
8		վ	ա	չ	ե	լ		ն	ե	ր	ո	
9	մ	ա	ր	ա	լ		հ	ա	մ	բ	ա	ւ
10	հ	ե	ռ		ս	ա	ր			ն	ւ	
11	լ	ա	ր		յ	ա	պ	ա	ղ	ի	լ	
12	ա	ն	ի	ս	ո	ն		ր	ա	կ	ի	խ

#### ԼՈՒՐԻՄ

Երկուշաբթի 5/9



23° 37°

Երեքշաբթի 6/9



22° 36°

Չորեքշաբթի 7/9



22° 34°

Հինգշաբթի 8/9



21° 35°

Ուրբաթ 9/9



22° 36°

Շաբաթ 10/9



22° 37°

Կիրակի 11/9



21° 36°





## 262 ԼՈՅՍԵՐ

Արդեն հասած էր Սուրիոյ Պատանեկան Միութեան Ընդհանուր Վարիչ Մարմինին կազմակերպած տարեկան բանակումին մեկնելու պահը, որուն բոլոր պատանիները կազմ ու պատրաստ կը սպասէին: Այս տարի, բանակումներուն մասնակցութիւնը խրախուսիչ էր: Քեսապի սիրտը կրկին տրոփեց հայկականութեամբ: Կազմակերպուեցան երկու բանակումներ, որոնք անցնող տարիներէն տարբեր էին: Առաջինը «Խանասոր» բանակումն էր, որուն իրենց մասնակցութիւնը բերին 3-րդ, 4-րդ եւ 5-րդ կարգերը, ՀՄԸՄ-ի բանակավայրին մէջ, 22-28 Օգոստոսին: Երկրորդը՝ «Նիկոլ Դուման» բանակումը, որ տրամադրուած էր առաջին եւ երկրորդ կարգերուն, ՍՕԽ-ի «Կազդորման Կայան»-ին մէջ, 24-28 Օգոստոսին:

Չոյգ բանակումներուն մասնակցեցան 262 պատանիներ, Սուրիոյ տարբեր շրջաններէն՝ Յալէպէն, Դամասկոսէն, Քեսապէն, Լաթաքիայէն եւ Գամիշլիէն:

Պատանիները ամբողջ շաբթուան վրայ երկարող ճոխ եւ մտերմիկ մըթնոլորտի մէջ ապրեցան, ծանօթացան Նոր ընկեր-ընկերուհիներու, սորվեցան Նոր երգեր եւ կանչեր, ինչպէս նաեւ մանրամասնութեամբ տեղեկացան հայ ֆիտայիին կեանքին ու գործունէութեան ընդհանրապէս:

ՍՊՄ-ը կըրցաւ յաջողօրէն 309 անդամներով (պատանիներ եւ պատասխանատուներ) երկու բանակումներ, որովհետեւ ուներ յանձնառու պատասխանատուներ, դաստիարակ կազմ, որոնք մէկը մէկու գործը ամբողջացնելով եւ մէկ բռունցք դառնալով յաջող աւարտին հասցուցին միութեան կազմակերպած տարեկան բանակումը:

Բայց ո՞վ է տիպար պատանին: Կարելի՞ է բնորոշել զայն բառերով:

Իմ փորձառութենէն մեկնած տիպար պատանին ան է, որուն աչքերուն երբ նայիս, կը տեսնես զօրութիւն, գիտակցութիւն, ընկերասիրութիւն ու հայու ոգի:

Պատանին երբ հոգւով-սրտով երգ է յեղափոխական երգերն ու կանչերը կը ցնցէ քեզ: Երբ գրոյցներու մասնակցի՝ կ'ոգեւորէ քեզ իր արթուն միտքով:

Պատանին ունի նաեւ հարուստ ներաշխարհի եւ օրերու ընթացքին կը գարգացնէ ձիրքեր՝ պարել, երգել, ասմունքել, զաւեշտներու մասնակցիլ, բեմականացնել զանոնք եւ մարզական զանազան վարժութիւններ կատարել:

Յատկանշական էր մասնակցութիւնը Գամիշլիի մեր ընկեր-ընկերուհիներուն, որոնք յատկապէս այս տարի կըրցան մաս կազմել տարեկան բանակումին՝ ի հեճուկա բոլոր դժուարութիւններուն:

Բանակում մը աւարտ չի կրնար ունենալ առանց խարուկահանդէսի, որուն ընթացքին պատանիները կ'ամփոփեն իրենց ամբողջ շաբթուան յայտագիրն ու տարուան աշխատանքը, ապա կը փակեն զայն «Մշակ Բանուոր» քայլերգով:

Մասնակիցներուն զգացումները խառն էին՝ թե՛ ուրախ, եւ թե՛ տխուր: Պատանիները ուրախ էին, որովհետեւ միասին հաճելի շաբաթ մը ամբողջացուցին, սակայն բաժանումի պահը դժուար էր:

Վերջապէս մեր խորին շնորհակալութիւնը կը յայտնենք խոհարար մեր ընկերուհիներուն, որոնք համեղ ուտելիքներ պատրաստեցին իրենց դալար ձեռքերով, ինչպէս նաեւ մեր ծնողներուն, որոնք շնորհիւ բանակավայրը լուսաւորուեցաւ 262 լոյսերով: Շնորհակալութիւն, սիրելի՛ ծնողներ:

Այո՛, պատանիները թնդացուցին Քեսապը, եթէ հարկ ըլլայ իրենց ներուժով կրնան թնդացնել նաեւ մեր ողջ ներաշխարհը:

Աւօ Պողոսեան

